Co-funded by the European Union

Migration Partnership Facility

ICMPD International Centre for Migration Policy Development

People in Need

Աշխատանքի և սոցիալական ծառայությունների ազգային ինստիտուտ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏ

Ձեռնարկ և վերապատրաստման մոդուլ Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատողների համար

Նախատեսված նաև դասավանդողների պատրաստման համար

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏ

Ձեռնարկ և վերապատրաստման մոդուլ Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատողների համար

Նախատեսված նաև դասավանդողների պատրաստման համար

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Փորձագիտական խմբի ղեկավար՝

Վանանդ Կարապետյան, ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ձեռնարկի մշակման աշխատանքներին նաև աջակցել են՝

Հայկանուշ Չոբանյան, ՀՀ ՆԳՆ միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ,
Աննա Դավթյան, ՀՀ ԱՍՀՆ ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների փորձագետ

Փորձագետներ՝

Տաթևիկ Ավետիսյան, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության սոցիալական պաշտպանության բաժնի պետ,
Տաթևիկ Կարապետյան, ՀՀ ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ,
Տաթևիկ Բեժանյան, միգրացիոն փորձագետ

Սույն դասընթացի ծրագիրը, վերապատրաստման մոդուլը և համապատասխան նյութերը մշակվել են «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագիտական խմբի կողմից՝ «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակում: Այն համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) շրջանակում և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) միջոցով:

Նյութերի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:
Փորձագիտական խումբն իր շնորհակալությունն է հայտնում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ին՝ սույն ձեռնարկի ստեղծման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Բովանդակություն

Նախաբան 3

Դասընթացի մոդուլի նկարագիր 4

Հիմնախնդիր 4

Նպատակներ 5

Խնդիրներ 6

Ուսուցման մեթոդներ 6

Դասընթացից ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատում 7

«Սոցիալական աշխատանք միգրանտների հետ» դասընթացի թեմաներ 8

Ուղղորդումներ վերապատրաստողների համար 10

Հիմնական հասկացություններ 11

Հապավումներ 15

Թեմա 1. Միգրացիայի սահմանումն ու նկարագիրը, հասկացություններ և եզրույթներ 16

Թեմա 2. ՀՀ-ում միգրանտների ինտեգրման իրավական կարգավորումներ ու պաշտպանություն 19

Թեմա 3. Ապաստան հայցողների և փախստականների իրավունքներ ու պարտականություններ 31

Թեմա 4. Միգրանտների ինտեգրման առանձնահատկությունները. լեզվական ինտեգրում, կրթության հասանելիություն 48

Թեմա 5. Միգրանտների աշխատանքային զբաղվածության խնդիրների շրջանակ 53

Թեմա 6. Միգրանտների բնակարանային ապահովման և սոցիալական ծառայությունների հասանելիություն 57

Թեմա 7. Միգրանտների անվտանգ կացություն՝ ատելության, խտրականության կանխարգելմամբ 70

Թեմա 8. Միգրացիայի տեսանկյունից խոցելիության առանձնահատկություններ, ռիսկի գործոններ և հետևանքներ 73

Թեմա 9. Միգրանտների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները 77

Թեմա 10. Միգրանտների ինտեգրման շրջանակը և դերակատարները Չեխիայում, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունների դիտարկում 84

Օգտագործված գրականության ցանկ 90

Մոդուլի հետ կապված հանձնարարականներ, գործնական աշխատանքների նկարագրեր 91

Հավելված 1 92

Հավելված 2 96

Նախաբան

«Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի նպատակն է հակազդել դեպի ԵՄ անդամ պետություններ անօրինական միգրացիային՝ ապահովելով վերադարձողների ու օտարերկրյա քաղաքացիների հաջող ինտեգրումը Հայաստանի Հանրապետությունում: Ծրագիրն ունի երկու թիրախային ուղղություն. (1) բարելավել ՀՀ կառավարության կարողությունները՝ կառավարելու դեպի Հայաստան միգրացիայի հոսքերը; (2) զարգացնել միգրանտների տարբեր խմբերին ծառայություններ մատուցող տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները:
ՀՀ պետական կառույցների կարողությունների զարգացման նպատակով ծրագրի շրջանակում մշակվել է սույն համապարփակ ուսումնական ձեռնարկը, որի միջոցով իրականացվել են պիլոտային վերապատրաստումներ դասընթացավարների (ToT) և ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ սոցիալական աշխատողների համար: Սույն ձեռնարկը կծառայի նաև ծրագրի շրջանակից դուրս հետագա, շարունակական վերապատրաստումների համար: Այս գործողությունները կնպաստեն միգրացիայի ոլորտում կարողությունների զարգացմանը՝ համահունչ լինելով ՀՀ ԱՍՀՆ և ծրագրի նպատակներին ու ռազմավարական առաջնահերթություններին:
«Սոցիալական աշխատանք միգրանտների հետ» ձեռնարկը նախատեսված է պրակտիկ սոցիալական աշխատողների թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման համար՝ որպես կրթության մոդուլի լրացուցիչ օժանդակող նյութ: Մոդուլը կարող է ընդգրկվել սոցիալական աշխատողների և նրանց գործառույթներին մոտ գործառույթներ իրականացնող հարակից մասնագետների վերապատրաստման համար նախատեսված ծրագրերում՝ որպես առանձին, նեղ մասնագիտացման դասընթաց:
Ձեռնարկն ունի ծանոթագրական բնույթ և պարտադիր է միգրացիայի երևույթի և սոցիալական աշխատողի միջամտության շրջանակի վերաբերյալ նվազագույն գիտելիքների և պատկերացումների ձևավորման համար ու ենթադրվում է, որ այս դասընթացի մասնակիցները այն մասնագետներն են, որոնք կարող են ունենալ հայտնաբերման և կանխարգելման գործառույթներ (օրինակ՝ ՄՍԾ ՏԿ–ներում աշխատող մասնագետները, համայնքային սոցիալական աշխատողները, տարաբնույթ սոցիալական ծառայություններ մատուցող տարբեր ՀԿ-ների, հիմնադրամների աշխատակիցները):
Այսպիսով, սույն դասընթացը նպատակահարմար է այն մասնագետների ուսուցման համար, որոնք արդեն իսկ ունեն բավարար տեսական պատկերացումներ, գիտելիքներ և որոշակի հմտություններ՝ խոցելի խմբերի հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացի մոդուլի նկարագիր

Հիմնախնդիր

Սույն մոդուլը նպատակ ունի նպաստել փախստականների, վերադարձող միգրանտների և օտարերկրյա քաղաքացիների հաջող ինտեգրմանը Հայաստանում՝ զարգացնելով սոցիալական աշխատողների և հարակից մասնագետների կարողությունները նրանց հետ աշխատելու գործում: Այն ուղղված է բարելավելու Հայաստանի Հանրապետության կառավարության կարողությունները՝ կառավարելու դեպի Հայաստան միգրացիայի հոսքերը, զարգացնելու միգրանտների և փախստականների տարբեր խմբերին ծառայություններ մատուցող, նրանց հետ աշխատող սոցիալական աշխատողների կարողությունները:
Դասընթացին ներգրավվելու համար սովորողները պետք է տիրապետեն սոցիալական աշխատանքի հիմնական հասկացություններին, ունենան առաջնային գիտելիքներ՝ սոցիալական հիմնախնդիրների, խոցելիության և դրանով պայմանավորված սոցիալական գործառնման խաթարումների մասին:

Մոդուլի շրջանակում ուսումնասիրվում է միգրացիայի միջազգային և ազգային իրավական համատեքստը, անդրադարձ է կատարվում միգրացիայի հետ կապված խնդիրներին, առկա կարգավորումներին, միգրանտների խոցելիության և ռիսկի գործոններին, ՀՀ-ում միգրանտների պաշտպանության և աջակցության գործընթացի կազմակերպման հիմնական քայլերին ու այս համատեքստում ԵՄ-ում առկա մոտեցումներին:
Դասընթացն իրենից ենթադրում է ոչ միայն տեսական հատված, այլ նաև գործնական աշխատանքներ (օրինակ՝ առաջին հարցազրույցի վարում, ռիսկի գնահատում, անհատական ծրագրի կազմում, հույզերի կառավարման մեխանիզմների կիրառում և այլն):
Վերապատրաստման իրականացման տևողությունը 3 օր է (24 ակադեմիական ժամ):
Վերապատրաստման ավարտին մասնակիցներին հանձնվում է ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից սահմանված նմուշի դասընթացի ավարտական վկայական:

Նպատակներ

1 Զարգացնել պրակտիկ սոցիալական աշխատողների կարողությունները և հարստացնել գիտելիքը միգրատների հետ աշխատանքում,

2 տրամադրել գիտելիքներ միգրացիայի հետ կապված հասկացությունների, եզրույթների, իրավական հիմքերի, առկա իրավիճակի վերաբերյալ,

3 նպաստել սոցիալական աշխատողների հմտությունների զարգացմանը, օժանդակել նրանց՝ խորացնելու օրենսդրության միատեսակ կիրառման հմտությունները, ստանալու տեսական լրացուցիչ մասնագիտական գիտելիք և զարգացնելու աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ,

4 նպաստել միգրանտների հետ աշխատանքում սոցիալական աշխատողների պատրաստվածության և մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրման, ինտեգրման և այլ աշխատանքների հետ կապված գործընթացներում մասնակցության արդյունավետության բարձրացմանը,

5 դասընթացի մասնակիցներին ծանոթացնել միգրանտների հետ աշխատանքի առանձնահատկություններին:

Խնդիրներ

Ներկայացնել՝

- միգրացիայի սահմանումն ու նկարագիրը, վերջինիս հետ կապված հասկացություններն ու եզրույթները,
- միգրանտների ինտեգրման իրավական կարգավորումներն ու նրանց պաշտպանվածությունը,
- միգրանտների կարգավիճակի հետ կապված առանձնահատկությունները,
- միգրանտների համայնքում ինտեգրման խնդիրները, վերջիններիս կրթական, զբաղվածության, բնակարանային ապահովման, սոցիալական ու առողջապահական ծառայությունների հետ կապված ինտեգրման առանձնահատկությունները,
- ինտեգրման առանձնահատկությունները Չեխիայում և լավագույն փորձի տեղայնացման հնարավորությունները,
- սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները միգրանտների հետ աշխատանքում, համապատասխան տեխնիկաների կիրառման միջոցով իրականացնել գործնական կարողությունների և հմտությունների ուսուցում:

Ուսուցման մեթոդներ

- դասախոսություն
- նյութերի ներկայացում Power point կամ Canva ծրագրով
- ձեռնարկների տրամադրում
- քննարկումներ, վարժանքներ
- ինտերակտիվ պարապմունքներ
- գործնական խաղ, փորձի փոխանակում,
- իրավիճակային խնդրի լուծում (case study)

Դասընթացից ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատում

Դասընթացը կհարստացնի սոցիալական աշխատողների մասնագիտական փորձառությունը, աշխատանքային գործիքակազմը, կզարգացնի վերջիններիս կարողություններն ու հմտությունները:

Այսպիսով դասընթացը.

- կձևավորի ընդհանրական պատկերացում միգրացիայի, այդ ոլորտի իրավական կարգավորումների և միջազգային փորձի մասին
- կձևավորի ընդհանրական պատկերացում միգրանտների պաշտպանվածության, ինտեգրման առանձնահատկությունների մասին
- կնպաստի առավել արդյունավետ աշխատանքի իրականացմանը (հասցեական և ժամանակին աջակցության տրամադրում, համապատասխան ուղղորդումներ, իրազեկում, խորհրդատվություն, ծրագրերում ընդգրկում և այլն)
- կտրամադրի նեղ մասնագիտական գիտելիքներ միգրանտների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ (սոցիալական աշխատանքի մեթոդների կիրառման առանձնահատկություններ, էթիկայի սկզբունքների պահպանում, աշխատանքային գործիքների կիրառում և այլն):

Դասընթացի ավարտին մասնակիցները.

- կիմանան միգրացիայի հետ կապված հասկացություններ և եզրույթներ,
- կիմանան միգրացիայի հետ կապված հիմնական իրավական կարգավորումները,
- կիմանան միգրանտների ինտեգրման հետ կապված առանձնահատկությունների, խնդիրների, առկա իրավիճակի և նշված հարցերի շուրջ Չեխիայում կատարվող աշխատանքի մասին,

- կիմանան միգրանտների հիմնական խնդիրների և դրանց լուծումների մասին,
- կտիրապետեն միգրանտների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկություններին, մոտեցումներին ու սկզբունքներին,
- կկարողանան օգտվել ու համապատասխան իրազեկում, խորհրդատվություն, ուղղորդում կատարել միգրացիայի հետ կապված առկա ընթացակարգերի մասին:

«Սոցիալական աշխատանք միգրանտների հետ» դասընթացի թեմաներ

Հ/Հ	Թեմայի անվանումը	Ժամաքանակ
1	Միգրացիայի սահմանումն ու նկարագիրը, հասկացություններ և եզրույթներ	1.5
2	ՀՀ-ում միգրանտների ինտեգրման իրավական կարգավորումներն ու պաշտպանությունը	2.5
3	Ապաստան հայցողների և փախստականների իրավունքներն ու պարտականությունները, միգրանտների կարգավիճակը՝ քաղաքացիության հասանելիության տեսանկյունից	4
4	Միգրանտների ինտեգրման առանձնահատկությունները. լեզվական ինտեգրում, կրթության հասանելիություն	1.5

Հ/Հ	Թեմայի անվանումը	Ժամաքանակ
5	Միգրանտների աշխատանքային զբաղվածության խնդիրների շրջանակը	1.5
6	Միգրանտների բնակարանային ապահովման և սոցիալական ծառայությունների հասանելիությունը	3
7	Միգրանտների անվտանգ կացությունը՝ ատելության, խտրականության կանխարգելմամբ	2
8	Միգրացիայի տեսանկյունից խոցելիության առանձնահատկությունները, ռիսկի գործոնները և հետևանքները	2.5
9	Միգրանտների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները	4
10	Միգրանտների ինտեգրման շրջանակը և դերակատարները Չեխիայում, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունների դիտարկում	1.5
Ընդամենը		**24 ակ. ժամ**

Ուղղորդումներ վերապատրաստողների համար

Սույն դասընթացը նախատեսված է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև այլ կառույցներում աշխատող սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքի և հմտությունների բարձրացման համար (նեղ մասնագիտացմամբ):

Դասընթացի նպատակն է սոցիալական աշխատողներին տրամադրել միգրացիայի վերաբերյալ հիմնարար, ներառյալ՝ իրավական գիտելիքներ, որոնք կողմնորոշիչ դեր կխաղան պրակտիկայի ընթացքում նմանատիպ դեպքերի հանդիպելիս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոդուլը նախատեսված է ներկայացնել սոցիալական աշխատողներին, որոնք հնարավոր է իրենց աշխատանքային գործունեության ընթացքում արդեն իսկ առնչվել կամ հանդիպել կամ լսել են միգրացիայի հետ կապված դեպքերի մասին, ուստի, առավել նպատակահարմար է ուսուցումը կազմակերպել ակտիվ և ինտերակտիվ մեթոդների համատեղ կիրառմամբ, որտեղ հնարավորություն կտրվի սոցիալական աշխատողներին կիսվել իրենց փորձով, գաղափարներով, պրակտիկայում ծագած խնդիրներով և այլն: Սակայն, այդ ամենի հետ մեկտեղ, մասնագետների կողմից պետք է նաև նախապես ուսումնական նպատակներով մշակված դեպքերի օրինակներ լինեն, որոնք հարմարեցված կլինեն թեմաների քննարկման համար: Կարող են ներկայացնել օրինակներ հանրածանոթ դեպքերից, ֆիլմերից և այդ օրինակների ներկայացմամբ իրականացնել քննարկում:

Հիմնական հասկացություններ

Անձը հաստատող փաստաթուղթ

Փաստաթուղթ, որը կոչված է ապացուցել այն կրող անձի ինքնությունը:

Մարդու թրաֆիքինգ

Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին (զոհին) վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով:

Աշխատանքային միգրացիա

Աշխատանքային զբաղվածության նպատակով՝ մարդկանց տեղաշարժն է մեկ պետությունից մյուսը կամ իրենց բնակության երկրի տարածքում տեղից տեղ տեղաշարժն է: Աշխատանքային միգրացիան երկրների մեծամասնության դեպքում կանոնակարգվում է ազգային միգրացիոն օրենսդրությամբ:

Ծագման երկիր

Մարդու իրավունքները կոչված են ապահովելու յուրաքանչյուր անձի՝ հասարակության մնացած անդամների և պետական մարմինների կողմից իր մարդկային արժանապատվությանն ու պատվին համապատասխան վերաբերմունքի արժանանալու իրավունքը: Մարդու իրավունքները՝ որպես իրավունքի ճյուղ, կառավարություններին պարտավորեցնում է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի այլ գործողություններից: Անհատները ևս ունեն պարտականություններ. իրենց իրավունքներից օգտվելիս նրանք պետք է հարգեն այլոց իրավունքները: Որևէ կառավարություն, խումբ կամ անհատ իրավունք չունի կատարելու որևէ գործողություն, որով կխախտվեն այլ անձի իրավունքները:

Տարանցիկ երկիր

Երկիր, որի տարածքով ուղևորվում է միգրանտը, երկիր, որի տարածքով տեղաշարժվում են միգրացիոն հոսքերը (օրինական և ապօրինի):

Կանոնավոր միգրացիա

Միգրացիա, որը տեղի է ունենում ճանաչված, իրավական ուղիներով:

Ներքին թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգ, որը տեղի է ունենում երկրի ներսում:

Նպատակակետ երկիր

Երկիր, որտեղ ուղևորվում է միգրանտը, երկիր, որը հանդիսանում է (օրինական և ապօրինի) միգրացիոն հոսքերի նպատակակետ:

Ռիսկերի գնահատում

Տվյալ իրավիճակի կամ իրադարձության հետ կապված ռիսկերի որոշման և գնահատման գործընթաց:

Սոցիալական վերականգնում

Հասարակության մեջ անհատի սոցիալական գործառնման համար անհրաժեշտ կարողությունների (ֆիզիկական, մտավոր, հաղորդակցման) և/կամ ռեսուրսների (մարդկային, նյութական և ոչ նյութական) վերականգնմանն կամ նորերի ձեռքբերմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

Ծագման երկիր

Միգրանտի կամ միգրանտների խմբի քաղաքացիության կամ նախկինում բնակության վայրի երկիր՝ անկախ միգրացիայի կանոնավոր կամ անկանոն լինելու հանգամանքից:

Միգրանտի վերադարձում

Օտարերկրացու տեղափոխումը իր քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր այն պետությունից, որն այդ անձի իր տարածքում գտնվելը համարում է անօրինական: Սա ներառում է ինչպես պետության կողմից իրականացվող արտաքսումը, այնպես էլ անհատական հիմունքներով կամ կազմակերպության հովանու ներքո իրականացվող կամավոր վերադարձը:

Շահագործում

Այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը:

Քաղաքացիություն չունեցող անձ

Անձ, որը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա:

Սահմանների կառավարում

Անձանց, ներառյալ գործարարների, զբոսաշրջիկների, միգրանտների և փախստականների կողմից սահմանների հատման թույլատրելի հոսքի դյուրինացումն է, ինչպես նաև տվյալ երկրի քաղաքացի չհանդիսացող անձանց կողմից տվյալ երկիր անօրինական մուտքի հայտնաբերումն ու կանխանգելումն է: Սահմանների կառավարման միջոցառումները ներառում են պետությունների կողմից վիզաների պահանջների սահմանումը, անօրինական միգրանտների տվյալ երկրի տարածք ցամաքային կամ ծովային ճանապարհով փոխադրող ընկերությունների նկատմամբ պատժամիջոցների սահմանումը: Միջազգային ստանդարտները պահանջում են ապահովել հավասարակշռություն օրինական ճանապարհորդների մուտքի դյուրինացման և ոչ պատշաճ պատճառներով կամ անվավեր փաստաթղթերով ճանապարհորդների մուտքը կանխելու գործընթացում:

Արտաքսում

Օտարերկրացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, իր ինքնավարության սահմաններում իրականացվող, որևէ պետության կողմից իր տարածքից վտարելու գործողություն, ինչպես նաև այդ պետության տարածք տվյալ անձի մուտքի մերժումը կամ այդ տարածքում գտնվելու թույլտվության անվավեր ճանաչումը:

Միգրացիայի կառավարում

Տերմին, որը ներառում է ազգային համակարգում կառավարման գործառույթներ՝ սահմանը հատող միգրացիայի կանոնավոր և մարդասիրական կառավարման նպատակով, մասնավորապես կառավարելու՝ օտարերկրացիների մուտքը և գտնվելը երկրի սահմաններից ներս, ինչպես նաև կառավարելու փախստականների և պաշտպանության կարիք ունեցող այլ անձանց պաշտպանությունը: Այն ներկայացնում է քաղաքական, օրենսդրական և վարչական միջոցառումների պլանավորած մոտեցում՝ լուծելու միգրացիոն հիմնական խնդիրները:

Ապաստան

Պաշտպանության տեսակ, որը տրվում է պետության կողմից իր տարածքում՝ փախստականին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքի և փախստականների՝ միջազգային կամ ազգային մակարդակով ճանաչված իրավունքների հիման վրա: Այն շնորհվում է այն անձին, որը, հատկապես, ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով չի կարող պաշտպանություն հայցել իր քաղաքացիության և (կամ) բնակության վայրի պետությունում:

Բռնի տեղահանված անձինք

Բռնի տեղահանված են համարվում այն անձինք, որոնք ստիպված կամ պարտադրված են եղել լքելու իրենց երկիրը կամ մշտական բնակության բնակավայրը՝ զինված կոնֆլիկտների, համատարած բռնության, մարդու իրավունքների խախտումների հետևանքով:

Ապաստան հայցող

Անձ, որը հետապնդումից կամ լուրջ վտանգից պաշտպանություն է փնտրում իր սեփական երկիրը չհանդիսացող այլ երկրում և սպասում համապատասխան միջազգային և ազգային փաստաթղթային գործիքների հիման վրա փախստականի կարգավիճակ ստանալու համար ներկայացված դիմումի կապակցությամբ որոշում ընդունելուն:

Չվերադարձելիության սկզբունք

Փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:

Փախստական

Այն օտարերկրյա քաղաքացին, ով ռասսայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ, այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՄՍԾ ՏԿ	Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների գործակալություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՆԳՆ ՄՔԾ	Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն

Թեմա 1

Միգրացիայի սահմանումն ու նկարագիրը, հասկացություններ և եզրույթներ

Անձի ազատ տեղաշարժի իրավունքը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

1948թ. ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 13-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած՝ այդ թվում սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիան ընդգծում է հիշյալ իրավունքի իրականացման շրջանակները: Սակայն այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը վերապահվում է միայն այն անձին, որն «օրինական հիմքերով է գտնվում որևէ պետության տարածքում»:

Միգրացիան (*լատ. migratio, migro-գաղթ, վերաբնակեցում*) բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժն է մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ:

Յուրաքանչյուր երկրի բնակչության թվաքանակը փոխվում է ոչ միայն բնական շարժի (սերնդափոխություն), այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի (գաղթերի) շնորհիվ: Միգրացիաները կարևոր դեր են կատարել մարդկության պատմության մեջ. նրանց հետ են կապված բնակեցման, հողի տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և աշխարհով մեկ տարածման գործընթացները: Այսպիսով, միգրացիան մարդու կամ մարդկանց խմբի տեղաշարժն է, որն իրականացվում է միջազգային սահմանը հատելու միջոցով կամ պետության ներսում: Բնակչության տեղաշարժն է՝ անկախ այն հանգամանքից, թե որքան է տևում, ինչ կազմ է ընդգրկում, և թե որոնք են տեղաշարժի պատճառները: Այն ներառում է փախստականների, տեղահանված անձանց, տնտեսական միգրանտների և այլ նպատակներով տեղաշարժվող անձանց միգրացիան, ներառյալ ընտանեկան վերամիավորման նպատակով տեղաշարժը:

Ըստ ուղղության միգրացիան լինում է **արտաքին** (միջմայրցամաքային և միջպետական) և **ներքին** (ներպետական): Արտաքին միգրացիան մարդկանց տեղաշարժն է մի երկրից մյուսը՝ աշխատանք գտնելու, բնակվելու կամ հալածանքներից խուսափելու նպատակով, որի դեպքում հատվում են տվյալ երկրի սահմանները: Արտաքին միգրացիան իր հերթին ունի 2 ուղղություն՝ **իմիգրացիա** , որը սահմանվում է, որպես որևէ երկիր մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով այլ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը, և էմիգրացիա, որն էլ սահմանվում է իրենց քաղաքացիության երկրից մարդկանց ելքը՝ այլ երկրում մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով:

Ներքին միգրացիան մարդկանց տեղաշարժն է տվյալ երկրի ներսում, առանց վերջինիս սահմանները հատելու: Ներքին միգրացիայի ուղղություններն են՝ գյուղ-քաղաք, քաղաք-գյուղ, քաղաք-քաղաք, գյուղ-գյուղ տեղաշարժերը:

Ըստ բնույթի միգրացիան կարող է լինել **կամավոր** և **հարկադիր**: Եթե անձի միգրացիան կատարվել է իր կամքով, առանց հարկադրանքի, ապա միգրացիան կամավոր է, իսկ եթե որոշումն ընդունվել է արտաքին գործոնների (բնական մարդկային՝ զինված ընդհարումներ, ներքին զանգվածային անկարգություններ, միջէթնիկական կոնֆլիկտներ կամ մարդու իրավունքների համատարած և պարբերական խախտումներ, ինչպես նաև հալածանքի վտանգ, բնական աղետներ) ազդեցության արդյունքում՝ միգրացիան համարվում է հարկադիր:

Միգրացիայի հիմնական պատճառներից մեկը սոցիալ-տնտեսականն է (աղքատություն, գործազրկություն և այլն), սակայն միգրացիա կարող է տեղի ունենալ նաև քաղաքական, ընտանեկան-կենցաղային, կրոնական, ազգային, էկոլոգիական և այլ պատճառներով պայմանավորված:

Այսպիսով, միգրացիան ըստ տևողության լինում է մշտական և ժամանակավոր, ըստ ձևի՝ անհատական և խմբային, ըստ բնույթի՝ կամավոր և հարկադիր, իսկ ըստ կազմի՝ դիտարկում ենք՝ սեռ, տարիք, կրթական մակարդակ, ընտանեկան վիճակ:

Ինչ վերաբերում է **միգրանտ** եզրույթին, ապա միգրանտ է համարվում մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով մի վայրից (երկրից) այլ վայր (երկիր) տեղափոխված անձը: Ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM/ՄՄԿ) սահմանման միգրանտն այն անձն է, որը տեղաշարժվում է կամ արդեն տեղաշարժվել է միջազգային սահմանով կամ երկրի ներսում՝ իր մշտական բնակավայրից հեռու տարածք՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ իրավական կարգավիճակ ունի անձը, տեղաշարժը եղել է կամավոր, թե հարկադիր՝ անկախ տեղաշարժման դրդապատճառներից և տևողությունից:

Միգրացիան հաճախ վերլուծվում է՝ համաձայն ձգող և վանող գործոնների:

Ձգող գործոնները այլ վայրում ապրելու գրավիչ պայմանների ամբողջությունն է՝ բարձր աշխատավարձ, բարձր կենսամակարդակ, սոցիալական կարգավիճակի բարձրացման հնարավորություններ, սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունություն, ազգամիջյան և միջկրոնական հանդուրժողականություն, բարենպաստ բնակլիմայական պայմաններ, ծառայությունների առկայություն և այլն: Վանող գործոններն են անհատի/խմբի իր բնակավայրում գոյության ծանր կամ անբավարար պայմանները՝ աշխատանքի բացակայություն, ցածր կենսամակարդակ, մասնագիտական առաջխաղացման դժվարություններ, ազգամիջյան, կրոնական հակամարտություններ, դիկտատուրա, հետապնդում, պատերազմներ, տնտեսական ճգնաժամ, տարերային, տեխնածին աղետներ, սահմանափակ ծառայություններ և այլն:

Հարցեր քննարկման համար

1. *Ինչ է միգրացիան: Որոնք են արտաքին և ներքին միգրացիաների առանձնահատկությունները և տարբերությունները:*
2. *Ով է համարվում միգրանտ:*

Թեմա 2

ՀՀ-ում միգրանտների ինտեգրման իրավական կարգավորումներ ու պաշտպանություն

Ապաստան փնտրելու և ստանալու իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում /Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, «Փախստականների մասին» 1951թ. ժնևյան կոնվենցիա/, այնպես էլ մի շարք պետությունների սահմանադրություններում և օրենքներում: Ապաստանի տրամադրումը ենթադրում է պաշտպանություն հետ վերադարձվելուց /«non-refoulerment» սկզբունք/ և տվյալ երկրի տարածքում մնալու հնարավորություն այնքան ժամանակ, որքան որ պաշտպանության կարիք կա: Այլ կերպ ասած, մինչև տվյալ երկրի սահմանային կետ հասած և այդ երկրից ապաստան հայցող անձին թույլատրվում է մուտք գործել երկիր և այնտեղ մնալ առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ բացասական որոշում չի կայացվել նրա հայցի վերաբերյալ: Որոշ երկրներ, այդ թվում ՀՀ-ն, ապաստանի հայցադիմումներ են ընդունում նաև արդեն իրենց երկիր մուտք գործած և այնտեղ անօրինական բնակվող օտարերկրացիներից, ինչը վերջիններիս կողմից դիտվում է որպես իրենց անօրինական վիճակը օրինականացնելու հնարավորություն:

Փախստականների իրավունքները պաշտպանող հատուկ իրավական կարգավիճակը կոչվում է «փախստականների միջազգային պաշտպանություն»: Այս ռեժիմի անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ փախստականներն ունեն հատուկ կարգավիճակ, որը պահանջում է լրացուցիչ երաշխիքներ: Ապաստան հայցողները և փախստականները չունեն իրենց սեփական երկրի կողմից տրվող պաշտպանությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը հաստատում է յուրաքանչյուր մարդու ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունքը: Այնուամենայնիվ, միջազգային մակարդակում «ապաստան» հասկացությունը հստակ սահմանված չէր մինչև այն պահը, երբ փախստականների կարգավիճակին վերաբերող 1951 թվականի կոնվենցիան ընդունվեց և ՄԱԿ ՓԳՀ-ին (UNHCR) տրվեց հանձնարարական՝ վերահսկելու կոնվենցիայի կիրարկումը:

1951 թվականի կոնվենցիան և դրա 1967 թվականի արձանագրությունը, ինչպես նաև տարածաշրջանային իրավական փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ 1969 թվականին ընդունված կոնվենցիան, որը կանոնակարգում է Աֆրիկայում փախստականների խնդիրների գործոնները, հանդիսանում են փախստականների պաշտպանության ժամանակակից ռեժիմի հիմնաքարերը: Այս փաստաթղթերը սահմանում են փախստականի համընդհանուր սահմանումը և ներառում են փախստականների հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

1951 թվականի կոնվենցիայի դրույթները շարունակում են հանդիսանալ միջազգային հիմնական չափանիշը, որի համեմատությամբ էլ գնահատվում են փախստականների պաշտպանվածությանն ու վերաբերմունքին ուղղված միջոցառումները: Կոնվենցիայի ամենակարևոր կարգավորումը սահմանված է 33-րդ հոդվածում և վերաբերում է ոչ հարկադիր վերադարձի սկզբունքին, որը նախատեսում է փախստականների վերադարձի արգելք բոլոր այն դեպքերում, երբ իրենց կյանքն ու ազատությունը կլինի վտանգված: Պետությունն է փախստականների պաշտպանված լինելու գլխավոր պատասխանատուն: ՄԱԿ ՓԳՀ-ն, ըստ անհրաժեշտության, սերտորեն համագործակցում է կառավարությունների հետ՝ տրամադրելով խորհրդատվություն և աջակցություն, որպեսզի իրականացնեն իրենց պարտականությունները:

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ստացած մանդատով ապահովում է փախստականների միջազգային պաշտպանությունը և աշխատում է կառավարությունների հետ՝ հետապնդելով նպատակ՝ մշակել մշտական լուծումներ փախստականների առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար: Փախստականների մեծամասնության համար, ներառյալ ԵԱՀԿ տարածաշրջանում գտնվողների, ինտեգրումը ամենաակտուալ և երկարաժամկետ լուծումն է: Տրված մանդատը իրացնելիս՝ ՄԱԿ ՓԳՀ-ն հիմնվում է 1951 թվականի փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 34-րդ հոդվածի վրա, որը սահմանում է, որ պետությունները պարտավոր են, որքան հնարավոր է, դյուրինացնել փախստականների ինտեգրման գործընթացը: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև հիմնվում է ինտեգրման հետ առնչվող մի շարք իրավական ակտերի և փաստաթղթերի վրա: 1951 թվականի Կոնվենցիան հիմնված է այն գաղափարի վրա, որ ժամանակի ընթացքում փախստականները պետք է ունենան հնարավորություն՝ օգտվելու իրավունքների առավել լայն շրջանակից, որը թույլ կտա ընդունող երկրի հետ առավել ամուր կապեր հաստատելու: Այս առումով, 1951 թվականի Կոնվենցիան փախստականներին հնարավորություն է տալիս աստիճանաբար վերականգնելու այն սոցիալական և տնտեսական անկախությունը, որը անհրաժեշտ է իրենց հետագա կյանքի համար:

1993 թվականի ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց միանալ Ժնևի 1951 թվականի հուլիսի 28-ի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիային և Ժնևի 1967 թվականի հոկտեմբերի 4-ի «Փախստականների կարգավիճակի մասին» արձանագրությանը:

Հիմնական իրավական ակտերը, որոնք կարգավորում են ՀՀ-ի և օտարերկրացիների փոխհարաբերությունները «Փախստականների և ապաստանի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին», ինչպես նաև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքներն են:

Առկա են այլ իրավական ակտեր, որոնք կարգավորում են միգրանտների ինտեգրման և այլ խնդիրների հետ կապված հարցերը:

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի՝ **«օտարերկրացիներ»** են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ չունեն որևէ պետության քաղաքացիություն (**քաղաքացիություն չունեցող անձինք**):

Այստեղ կարևոր է անդրադառնալ բոլոր հասկացություններին, որոնք սահմանվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում.

անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (այսուհետ՝ անձնագիր)՝ միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը.

արտոնագիր կամ մուտքի վիզա (այսուհետ՝ մուտքի վիզա)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործելու Հայաստանի Հանրապետություն, տարանցիկ երթևեկելու Հայաստանի Հանրապետության տարածքով, գտնվելու Հայաստանի Հանրապետությունում և դուրս գալու Հայաստանի Հանրապետությունից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով և ժամկետներում.

Ժամանակավոր կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում որոշակի ժամկետով. (տրվում է 1 տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությամբ՝ ՆԳՆ ՄՔԾ կողմից)

Մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում. (տրվում է 5 տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությամբ՝ ՆԳՆ ՄՔԾ կողմից)

Հատուկ կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում.
(տրվում է 10 տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությամբ: Տրվում է ՀՀ վարչապետի որոշմամբ:)

Աշխատանքի թույլտվություն՝ միասնական էլեկտրոնային հարթակում միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնի կողմից մուտքագրվող էլեկտրոնային հաստատում, որը թույլ է տալիս օտարերկրացուն ձեռք բերել ժամանակավոր կացության կարգավիճակ և աշխատել Հայաստանի Հանրապետությունում.

Ծագման պետություն՝ պետություն, որի քաղաքացին է համարվում այն անձը կամ այն պետությունը, որում բնակվում է քաղաքացիություն չունեցող անձը կամ այն անձը, որի քաղաքացիությունը հնարավոր չէ հաստատել.

Հրավեր կամ միջնորդագիր (այսուհետ՝ հրավեր)՝ փաստաթուղթ, որը հիմնավորում է օտարերկրացու մուտքը և գտնվելը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ դրանում նշված նպատակներով և ժամկետներով.

արտաքսում՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում իրավասու պետական մարմնի կողմից օտարերկրացու հարկադիր հեռացումը Հայաստանի Հանրապետությունից.

կոլեկտիվ արտաքսում՝ առնվազն երկու օտարերկրացիներից բաղկացած խմբի արտաքսումը՝ առանց խմբի յուրաքանչյուր անդամի անձնական տվյալները և առանձնահատուկ վիճակը հաշվի առնող օբյեկտիվ և ողջամիտ քննարկման հիման վրա ընդունված որոշման.

փոխադրող՝ ցամաքային և օդային տրանսպորտով միջազգային ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպություն.

ուղեկցող՝ մշակութային, մարզական, երիտասարդական միջոցառումներին մասնակցելու կամ խմբակային զբոսաշրջության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող մինչև 18 տարեկան օտարերկրացիների խմբի ղեկավար.

ընդունող կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ, որը կազմակերպում է մինչև 18 տարեկան օտարերկրացիների մասնակցությամբ մշակութային, մարզական, երիտասարդական միջոցառումներ կամ զբոսաշրջային տուրեր:

միասնական էլեկտրոնային հարթակ՝ սույն օրենքի 22.1-ին հոդվածով նախատեսված էլեկտրոնային հարթակ, որի կիրառմամբ տրամադրվում է աշխատանքի թույլտվություն, դրա միջոցով մուտքագրվում կամ վերբեռնվում են աշխատանքի թույլտվություն ստացող և աշխատանքի թույլտվությունից ազատված օտարերկրացի աշխատողների վերաբերյալ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով տեղեկություններ, ինչպես նաև իրականացվում է պետական մարմինների, գործատուների և օտարերկրացիների միջև հաղորդակցությունը:
Օտարերկրացիների կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը ներկայացված են «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, որի առաջին մասում ասվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

- օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում (ունի կացության կարգավիճակ, ՌԴ քաղաքացիների դեպքում կամ կացության կարգավիճակ կամ հաշվառում ՀՀ հասցեով).

- կարող է բացատրվել հայերեն լեզվով և
- ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Օտարերկրացին, որն ամուսնացած է ՀՀ քաղաքացու հետ, եթե ցանկանում է ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, ապա պետք է վերջին երկու տարվա ընթացքում գրանցված ամուսնության մեջ գտնվի ՀՀ քաղաքացու հետ, ոչ պակաս քան վերջին երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվելիս լինի ՀՀ-ում (ունենա կացության կարգավիճակ, ՌԴ քաղաքացիների դեպքում կամ կացության կարգավիճակ կամ հաշվառում ՀՀ հասցեով) և պետք է ծանոթ լինի ՀՀ Սահմանադրությանը:

Օտարերկրացին, որն ունի ՀՀ քաղաքացի զավակ, նրանից բնակության ցենզ չի պահանջվում, բավական է միայն ծանոթ լինել ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ-ում փախստական ճանաչված անձից ևս բնակության ցենզ և լեզվի իմացություն չի պահանջվում, բավական է միայն ծանոթ լինել ՀՀ Սահմանադրությանը:

Ծագումով հայ օտարերկրացիները կամ այն օտարերկրացիները, որոնք ունեն հայ նախնիներ՝ ծնողներ, տատիկ, պապիկ, ՀՀ քաղաքացիություն ստանում են պարզեցված կարգով՝ ներկայացնելով ազգությունը հավաստող փաստաթուղթ (ծննդյան վկայական կամ մկրտության վկայական):

Ազգությամբ հայ երեխան, որի ծնողները ՀՀ քաղաքացիներ չեն, ՀՀ-ում բնակություն հաստատելու (բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետության հասցեով հաշվառվելու) պահից ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք՝ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է նաև ծնողների գրավոր համաձայնությունը («ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, Հոդված 12.1): Այս հոդվածից կարող են օգտվել նաև Արցախից բռնի տեղահանված և ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականների երեխաները: 2024թ. հունվարի 5-ից հետո ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստակաների ՀՀ-ում ծնված երեխաները օրենքի ուժով հանդիսանում են ՀՀ քաղաքացի՝ «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն: Այս հոդվածը վերաբերվում է նաև ՀՀ-ում ծնված այն երեխաներին, որոնց ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ծնողների քաղաքացիությունն անհայտ կամ ծնողները չեն կարող փոխանցել իրենց քաղաքացիությունը (օրինակ արցախցիները):

Կարևոր է նշել, որ ՀՀ կառավարությունն իրականացնում է **ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագիր, որի** նպատակն է առաջնային օժանդակություն ցուցաբերել Հայաստան վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) ՀՀ քաղաքացիներին՝ հետագայում նրանց լիարժեք և կայուն վերաինտեգրումը ապահովելու նպատակով: Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ-ն է:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝ տեղեկատվական աջակցության տրամադրում և կարիքներին համապատասխան ուղղորդում, ինչպես նաև կացարանով ապահովում: Առաջին բաղադրիչը վերաբերում է հավասարապես հարկադիր և կամավոր վերադարձող ՀՀ քաղաքացիներին, երկրորդ բաղադրիչը՝ հիմնականում հարկադիր, իսկ առանձին դեպքերում՝ նաև կամավոր վերադարձած ՀՀ քաղաքացիներին:

Երկրորդ բաղադրիչի հիմնական թիրախային խումբը հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիներն են, այդ թվում՝

1. *հեքընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի շրջանակում վերադարձողները.*
2. *օտարերկրյա պետություններից արտաքսված կամ վտարված ՀՀ քաղաքացիները:*

Ծրագրի երկրորդ բաղադրիչի շահառու կարող են դառնալ առնվազն մեկ տարի արտերկրում բնակվելուց հետո ՀՀ հարկադիր, իսկ առանձին դեպքերում՝ նաև կամավոր վերադարձած այն քաղաքացիները, որոնք վերադարձից հետո առավելագույնը երեք ամսվա ընթացքում դիմում են ծրագրին՝ աջակցություն ստանալու նպատակով, և Հայաստանի Հանրապետությունում չունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն: Ծրագրի շրջանակում երկրորդ բաղադրիչի համար աջակցություն ստանալու հարցում կարող են դիմել այս պայմաններին բավարարող կամավոր վերադարձած այն ՀՀ քաղաքացիները, որոնք կհամապատասխանեն հետևյալ խոցելի խմբերից առնվազն մեկին՝

1. *բազմազավակ ընտանիք (4 և ավելի երեխաներ ունեցող),*
2. *հաշմանդամություն ունեցող անձինք:*

Հայաստան վերադարձող միգրանտների վերաինտեգրման գործընթացում առաջանում են մի շարք հիմնախնդիրներ՝ իրազեկման, զբաղվածության, բնակարանային, սոցիալ-տնտեսական ապահովության, հոգեբանական, կրթամշակութային և այլն: Ծրագրի առաջնային խնդիրներից է վերոնշյալ հիմնախնդիրների շարքում առանձնացնել առաջին անհրաժեշտության և հրատապության կարիքների այն շրջանակը, որոնց առնչությամբ վերադարձողները կարող են ակնկալել պետության աջակցությունը, և որոնց լուծման ուղղությամբ պետությունը կարող է ձեռնարկել որոշակի քայլեր: Նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ մի քանի հիմնական ուղղություններով:

Տեղեկատվական աջակցություն. Վերադարձածի համար առաջնահերթ խնդիրներից մեկն էլ տեղեկատվության պակասն է, որը լուրջ խոչընդոտ է ծագման երկրում նրանց վերահաստատման համար: Ելնելով վերոնշվածից՝ նախատեսվում է
վերադարձած միգրանտների՝ իրենց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առկա մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում հետևյալ ուղղություններով՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտ, պետական կառավարման համապատասխան հիմնարկների ու վերադարձողների հիմնախնդիրների լուծմանն առնչվող այլ կազմակերպությունների գործունեություն,
- առողջապահական ծառայություններ, մասնավորապես՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկի և պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման մեխանիզմներ,
- սոցիալական աջակցության ծրագրեր և դրանք իրականացնող մարմիններ,
- կենսաթոշակային ապահովության համակարգ,
- զինապարտության հետ կապված հարցեր,
- անձնական իրերի տեղափոխման մաքսազերծման արտոնություններ,
- փաստաթղթային խնդիրներ, մասնավորապես՝ անձնագրային և երկքաղաքացիության ձեռքբերման հետ կապված հարցեր և այլն:

Ժամանակավոր կացարանով ապահովում. Որոշ ընտանիքներ նախքան մեկնելը վաճառում են իրենց բնակարանները՝ ճանապարհածախսը և այլ կարիքներ հոգալու նպատակով, ուստի վերադառնալով նրանք առաջնահերթ ունենում են կացարանի խնդիր: Սա մեծագույն խնդիր է հատկապես հարկադիր վերադարձածների շրջանում, ավելի հազվադեպ, բայց խնդիրն առկա է նաև կամավոր վերադարձածների մոտ:

Հարկադիր վերադարձած, իսկ առանձին դեպքերում նաև կամավոր վերադարձած ՀՀ քաղաքացիներին բնակարաններ վարձակալելու համար տրամադրվելու է սուբսիդիա. սուբսիդավորումը՝ 60.000 դրամի չափով և 6 ամիս տևողությամբ: Այդ նպատակով միգրացիայի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տվյալ տարվա բյուջետային հայտում ներառվում են համապատասխան միջոցառումները:

Առողջապահական խնդիրների լուծման նպատակով վերադարձողների ուղղորդում. Առողջության հրատապ խնդիրներ ունեցող վերադարձողները, ըստ իրենց կարիքների, բանավոր տեղեկատվության տրամադրման միջոցով ուղղորդվում են ԱԱՊ (առողջության առաջնային պահպանման) կազմակերպություններ:

Խնամքի տրամադրում. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, սոցիալական կարիքին համապատասխան, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամք ստանալու նպատակով ուղղորդում՝

- կկազմակերպվեն առանց ուղեկցության վերադարձած անչափահասներին և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին օդանավակայանում և սահմանի այլ անցման կետերում դիմավորելու, համապատասխան հաստատություններում նրանց հետագա խնամքը կազմակերպելու հարցերը,
- կկազմակերպվեն տարեց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխան խնամքի հաստատություններում նրանց հետագա խնամքը կազմակերպելու հարցերը:

Պետական միջամտությամբ առաջնային աջակցության ծրագրի իրականացման աշխատանքներն իրագործվելու են պետական այն մարմինների, միջազգային և հասարակական այն կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնք ներգրավված են վերադարձի և վերաինտեգրման գործընթացներում: ՄՍԾ-ի աշխատակիցները ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 19-ի N 336-L որոշման N 2 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների կարիքների գնահատման հարցաթերթի միջոցով վարում են հարցազրույց՝ վեր հանելով շահառուների հիմնական կարիքները:

Կարիքների գնահատման հարցաթերթում լրացվում են ընդհանուր տեղեկություններ՝ վերադարձողի անձնական տվյալների, վերադարձի ժամանակ առաջացած խնդիրների, փաստաթղթերի առկայության, եկամտի հիմնական աղբյուրների և չափերի, սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվածության, զբաղվածության, վերադարձողի հատուկ կարիքների, կացարանով ապահովվածության, առողջական խնդիրների, խնամքի հատուկ հաստատություններում տեղավորման և հարցաթերթում նշված այլ հարցերի վերաբերյալ: ՄՍԾ-ի աշխատակիցները ՀՀ վերադարձող քաղաքացիներից վերջիններիս համաձայնությամբ հավաքագրում են վերջիններիս անձնական գործի կազմման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Հավաքված բոլոր փաստաթղթերը պատճենահանվում և կցվում են դիմողի անձնական գործին:

Ծրագրի մասնակցության համար ինչպես հարկադիր, այնպես էլ կամավոր վերադարձող քաղաքացիները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. *անձը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում).*
2. *վերադարձի վկայական.*
3. *դատարանի կամ վարչական մարմնի կողմից արտաքսման կամ վտարման վերաբերյալ որոշումները.*
4. *լրացուցիչ փաստաթղթեր, որոնցով հնարավոր է տեղեկություններ ստանալ արտերկրում գտնվելու և Հայաստան վերադարձի ժամկետների, հաշմանդամություն ունենալու, բազմազավակ լինելու մասին և այլն:*

Ինչպես արդեն նշվեց, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք, առանց ուղեկցության վերադարձած և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, իրենց սոցիալական կարիքի համապատասխան, ենթական են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի տրամադրման, սակայն պետք է նշել, որ դրա անհնարինության դեպքում, նշված անձանց՝ ծրագրի չափանիշներին համապատասխանության դեպքում տրամադրվում է փոխհատուցում 60.000 դրամի չափով և 6 ամիս տևողությամբ:

ՄՍԾ-ի աշխատակիցը հարցազրույցի կամ դիմողի ներկայության անհնարինության դեպքում ուղարկված փաստաթղթերի միջոցով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության օգնությամբ 3 աշխատանքային օրվա ընթացքում վեր է հանում բնակչության սոցիալական պաշտպանության կամ կացարանով ապահովման հաստատություններում

տեղավորվելու խնդիր ունեցող անձանց կարիքները: ՄՍԾ-ի աշխատակիցն անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության կամ կացարանով ապահովման հաստատությունում տեղավորվելու կարիքը վեր հանելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է դիմողի անձնական գործը՝ կցելով նրա կարգավիճակը հավաստող առկա բոլոր փաստաթղթերը: Դիմողի անձնական գործը կազմելուց հետո 3-օրյա ժամկետում անձն ուղղորդվում է համապատասխան հաստատություն:

Անհրաժեշտության դեպքում ՀՀ ԱՍՀՆ-Ի և ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա կազմակերպվում է օդանավակայանում առանց ուղեկցության վերադարձած անչափահասներին և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին դիմավորելու, համապատասխան հաստատություններում տեղավորելու և նրանց հետագա խնամքը կազմակերպելու հարցերը: ՄՍԾ-ի աշխատակիցն առանց ուղեկցության վերադարձած անչափահասներին և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ՀՀ ԱՍՀՆ-ի հետ համատեղ օդանավակայանում դիմավորելու անհրաժեշտության մասին տեղեկացնում է ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը և համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմնին վերջինիս (վերջիններիս) վերադարձից առնվազն մեկ շաբաթ առաջ նախապես ուղարկված գրության միջոցով, որի մեջ նշվում է վերադարձի օրը, ամիսը, չվերթի համարը և վերադարձողին առնչվող առկա տեղեկատվությունը: Դիմավորումից հետո առանց ուղեկցության վերադարձած անչափահասների և Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետագա խնամքը կազմակերպում է ՀՀ ԱՍՀՆ-ն:

ՄՍԾ-ի աշխատակիցն իրականացնում է գրանցամատյանում հաշվառված՝ բնակչության սոցիալական պաշտպանության և կացարանով ապահովման հաստատություններում տեղավորվելու կարիք ունեցող դիմողներին աջակցության տրամադրման գործընթացի մշտադիտարկում՝ պարբերաբար կապ հաստատելով վերոնշյալ կենտրոնների հետ: Վերոնշյալ կենտրոններում տեղավորվելու կարիք ունեցող դիմողներին աջակցության տրամադրման գործընթացի մշտադիտարկման վերաբերյալ արդյունքները գրանցվում են գրանցամատյանում:

Հարցեր քննարկման համար

1 *Վերոնշյալ թեմայի շրջանակում ի՞նչ իրավական ակտեր կարող եք թվել, ի՞նչ կարևորություն ունեն դրանք:*

2 *Ինչպիսի՞ ծրագիր է իրականացնում ՀՀ կառավարությունը՝ վերաբերող ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանը և ո՞րն է այդ ծրագրի նպատակը:*

Թեմա 3

Ապաստան հայցողների և փախստականների իրավունքներն ու պարտականությունները

Ընդունված միջազգային նորմերի համաձայն՝ օտարերկրացուն մուտքի իրավունքի տրամադրումը համարվում է տվյալ երկրի ինքնիշխան իրավունքներից մեկը, և այն օտարերկրացիները, որոնք, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելով, մուտք են գործում կամ գտնվում (բնակվում են) այնտեղ, համարվում են անօրինական միգրանտներ: Անօրինական միգրանտի կարգավիճակում անձը կարող է հայտնվել թե՛ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործելու (մուտք առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի, կեղծ փաստաթղթերի ներկայացում, մուտք երկիր՝ ոչ սահմանային անցակետերով և այլն), և թե՛ օրինական ճանապարհով երկիր մուտք գործելու, սակայն թույլատրելի ժամկետից ավելի մնալու պարագայում:

Այսպիսով, անօրինական միգրացիան մարդկանց շարժն է, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցիկ և ընդունող երկրների կողմից սահմանված կանոնակարգող նորմերի խախտմամբ: Անօրինական միգրացիայի համար չկա հստակ կամ համընդհանուր ընդունված սահմանում: Համաձայն նպատակակետ երկրների դիրքորոշումների՝ ընդունող երկիր անօրինական միգրացիան այն մուտքն է, կացությունը կամ աշխատանքը, որն իրականացվում է առանց անհրաժեշտ թույլտվությունների կամ փաստաթղթերի, որոնք պահանջվում են ներգաղթման կանոնակարգերի համաձայն: Ուղարկող երկրի տեսանկյունից անօրինականությունը դրսևորվում է, օրինակ, այն դեպքերում, երբ անձը հատում է միջազգային սահմանը՝ առանց վավեր անձնագրի կամ ճանապարհորդական փաստաթղթի կամ չի կատարում երկրից դուրս գալու համար անհրաժեշտ վարչական պահանջները: Այնուամենայնիվ, կա միտում սահմանափակելու «անօրինական միգրացիա» տերմինը այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է միգրանտների անօրինական փոխադրմանը կամ մարդկանց թրաֆիքինգին: Մեծամասամբ նախընտրում են կիրառել «անկանոն միգրանտ» տերմինը՝ նկարագրելու համար միգրանտին, որը չունի բնակություն հաստատելու համար պահանջվող համապատասխան թույլտվությունը:

Օրինական կարգով երկիր մուտք գործելու հիմքեր են հանդիսանում.

կրթությունը - տվյալ պետության որևէ ուսումնական հաստատություն ընդունված անձը կարող է մուտք գործել և բնակվել այդ երկրում ուսանելու ժամանակահատվածում: Սակայն նրա մուտքը կթույլատրվի միայն այն պարագայում, եթե լինի հավաստիացում, որ նա կարող է ինքնուրույնաբար կամ որևէ հիմնադրամի կամ երրորդ անձի աջակցությամբ վճարել իր ուսման և կեցության հետ կապված բոլոր ծախսերը: Առանձնացվում է նաև ուսանողական միգրացիա եզրույթը, որն ուսանողների տեղաշարժն է, որոնք ուսանում են իրենց ծննդավայրից կամ քաղաքացիության երկրից դուրս՝ առնվազն 12 ամիս և ավելի ժամկետով:

աշխատանքը - տտվյալ երկրում աշխատելու թույլտվություն և գործատուի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում թույլատրվում է անձի մուտքը և որպես կանոն նման հնարավորություն տրվում է հատկապես բարձր որակավորում, պահանջարկ ունեցող մասնագետներին: Այս պարագայում երկրները սահմանում են մուտքի թույլտվության համար բարձր չափանիշներ, օրինակ՝ բավարար աշխատանքային ստաժ և փորձ, կրթություն, օտար լեզվի իմացություն և այլն: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել աշխատանքային միգրացիա եզրույթին, որն աշխատանքային զբաղվածության նպատակով՝ մարդկանց տեղաշարժն է մեկ պետությունից մյուսը կամ իրենց բնակության երկրի տարածքում տեղից տեղ տեղաշարժն է: Աշխատանքային միգրացիան երկրների մեծամասնության դեպքում կանոնակարգվում է ազգային միգրացիոն օրենսդրությամբ: Բացի այդ, որոշ պետություններ ակտիվ դերակատարում ունեն՝ արտագնա աշխատանքային միգրացիան կարգավորելու և իրենց քաղաքացիների համար արտերկրում աշխատանքի հնարավորություններ փնտրելու գործում: ՀՀ եկող աշխատանքային միգրանտների հետ կապված իրավակարգավորումները պայմանավորված են միգրանտների ծագման երկրներով և ՀՀ-ում ունեցած նրանց կարգավիճակով: ԵԱՏՄ անդամ երկրներից (ՌԴ, Բելոռուս, Ղազախստան, Ղրղզստան) եկող միգրանտները ՀՀ-ում աշխատելու համար թույլատվական բնույթի փաստաթղթի կարիք չունեն, բավական է միայն կնքել աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր, ներբեռնել այն **www.workpermit.am** հարթակ և իրենց ու իրենց ընտանիքի անդամներին կտրամադրվի Հայաստանի Հանրապետությունում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք, որը տրվում է անվճար: Ոչ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու համար պետք է ստանան աշխատանքի թույլտվություն: Աշխատանքի թույլտվությունից ազատված են նաև ՀՀ-ում որևէ հիմքով կացության կարգավիճակ ունեցող միգրանտները, փախստականները և ապաստան հայցողները:

ընտանիքի վերամիավորումը - տվյալ պետությունում օրինական բնակվող անձի ընտանիքի անդամները կարող են ժամանել այդ երկիր՝ իրենց հարազատի հետ բնակվելու նպատակով: Այս դեպքում որպես ընտանիքի անդամներ դիտարկվում են կինը/ամուսինը, անչափահաս երեխաները, խնամքի տակ գտնվող ծնողները:

Անդրադառնալով ապաստան հայցող եզրույթին, անհրաժեշտ է նշել, որ այն անձն է, որը որպես փախստական, փնտրում է միջազգային պաշտպանություն, սակայն միևնույն ժամանակ պահանջը դեռ որոշված չէ: Ապաստանն օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ-ում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ չվերադարձելիության սկզբունքի կիրառումը: Նա չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ դաժան, անմարդկային, ստորացուցիչ վերաբերմունքի, խոշտանգումների կամ պատժի վտանգ կա: Չվերադարձելիության սկզբունքն ապաստան հայցողի կամ փախստական ճանաչված անձի նկատմամբ չի կիրառվի՝

- եթե նա ճանաչվել է փախստական, սակայն հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում Հայաստանի անվտանգության համար,
- եթե դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության հիմքով՝ անձը վտանգավոր է հասարակության համար:

Այս համատեքստում անդրադառնալով քաղաքացիություն չունենալուն, անհրաժեշտ է նշել, որ Միջազգային իրավունքի համատեքստում քաղաքացիություն չունեցող անձ է համարվում այն անձը, որը «որևէ պետության կողմից տվյալ պետության օրենքների համաձայն չի ճանաչվել տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող անձ:»:

Այսպիսով կրկին անդրադառնալով փախստականներին, պետք է նշել, որ համաձայն 1951թ.ի կոնվենցիայի դրույթների՝ փախստական է ճանաչվում այն անձը, ով.

- գտնվում է իր ծագման երկրից դուրս
- չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ վերադառնալ այնտեղ
- ունի հետապնդումների ենթարկվելու հիմնավոր երկյուղ
- առկա են ռասսայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքներով պայմանավորված հետապնդումներ
- շրջապատված է համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձություններով

01

ՀՀ տարածք մուտք գործելուց հետո անձը կարող է ապաստան խնդրել գրավոր, բանավոր, ժեստերի միջոցով կամ ցանկացած այլ եղանակով սահմանային անցման կետերում, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության բաժանմունքներում, ՄՔԾ-ում կամ քրեակատարողական հիմնարկում:

02

Դիմումը ՄՔԾ հաշվառելուց հետո 15 օրվա ընթացքում աշխատակցի կողմից օտարերկրացու հետ կանցկացվի հարցազրույց: Հարցազրույցի անցկացման օրվա և ժամի մասին նախապես կտեղեկացվի:

03

Ապաստան ստանալու դիմումը քննարկվում է այն ներկայացնելուց հետո եռամսյա ժամկետում: ՄՔԾ-ի որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել ևս 3 ամիս: Դիմումի քննարկման արդյունքում ՄՔԾ-ը կընդունի որոշում.

ա Հայաստանում փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին,

բ ապաստանի դիմումը մերժելու մասին:

04

Հայաստանում փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին որոշում կայացնելուց հետո անձը դիմում է ըստ բնակության վայրի ՄՔԾ՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ստանալու համար:

01

Ապաստանի հայց

02

Հարցազրույց

03

Արձանագրության կազմում, ստորագրում

04

ՈՐՈՇՈՒՄ

Դրական

Բացասական

Փախստականի կարգավիճակ

Հեռացում Հայաստանից

Բողոքարկում

ՄՔԾ-ի կողմից ապաստանի դիմումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում 60 օրերի ընթացքում մերժման որոշումը չբողոքարկելու պարագայում օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ երկրից:

ՀՀ տարածք մուտք գործելուց հետո անձը կարող է ապաստան խնդրել գրավոր, բանավոր, ժեստերի միջոցով կամ ցանկացած այլ եղանակով սահմանային անցման կետերում, Ոստիկանության բաժանմունքներում, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում կամ քրեակատարողական հիմնարկում: Անձը իրավունք ունի ապաստան ստանալու համար դիմելու նույնիսկ այն դեպքում, երբ Հայաստան մուտք է գործել ապօրինի:
Ապաստանի հայցի դիմումը Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում հաշվառելուց հետո 15 օրվա ընթացքում աշխատակցի կողմից իրականացվում է հարցազրույց: Հարցազրույցի անցկացման օրվա և ժամի մասին տվյալ անձը նախապես տեղեկացվում է: Հարցազրույցն իրականացվում է՝ բնակության երկիրը լքելու պատճառների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով: Հարցազրույցի ժամանակ տրվում են հարցեր, և տվյալ անձը պետք է պատասխանի հնարավորինս սպառիչ և մանրամասն, պարտավոր է ներկայանալ հարցազրույցի, համագործակցել ծառայության հետ և տրամադրել ճիշտ տեղեկություն: Անհարգելի պատճառով հարցազրույցին չներկայանալու և չհամագործակցելու պարագայում, տվյալ դիմումի քննարկումը Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից դադարեցվում է:

Ապաստան ստանալու դիմումը քննարկվում է այն ներկայացնելուց հետո եռամսյա ժամկետում: Միգրացիայի և քաղաքացիության ծառայության որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել ևս 3 ամիս: Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն ապաստանի դիմում ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է ապաստան հայցողի վկայական: Այս փաստաթուղթը հաստատում է, որ տվյալ անձը Հայաստանում ապաստան է հայցել, և Հայաստանի տարածքում գտնվելն օրինական է: Այդ վկայականով անձը կարող է ազատ տեղաշարժվել Հայաստանի Հանրապետության տարածքում, իրացնել մի շարք իրավունքներ, օգտվել մի շարք ծառայություններից: Ապաստան հայցողի վկայականը տրամադրվում է 3 ամիս ժամկետով: Եթե այդ ընթացքում ապաստանի դիմումի վերաբերյալ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը որոշում չի կայացնում, ապա վկայականի գործողության ժամկետը երկարաձգվում է ևս 3 ամիս ժամկետով:

Դիմումի քննարկման արդյունքում՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն ընդունում է Հայաստանում փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին կամ ապաստանի դիմումը մերժելու մասին որոշումներից մեկը: Որոշումը կայացվում է հիմնվելով տվյալ անձի անհատական գործում եղած և հարցազրույցի ժամանակ վերջինիս կողմից տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև տվյալ անձի ծագման երկրի մասին առկա տեղեկությունների հիման վրա: Անհրաժեշտության դեպքում Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը կարող է կիրառել փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու բացառման հիմքերը, որոնց թվում են՝ հանցագործություններն ընդդեմ խաղաղության կամ մարդկության, պատերազմական կամ այլ ծանր հանցագործությունները, ՄԱԿ-ի սկզբունքներին հակասող արարքները, ինչպես նաև երրորդ ապահով երկրից առանց հետապնդման երկյուղի ժամանումը (ՀՀ օրենքը փախստականների և ապաստանի մասին, հոդված 11):

Կարևոր է ընդգծել, որ, եթե տվյալ անձն արդեն իսկ ճանաչվել է փախստական՝ այլ պետության կողմից (որը միացել է «Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» 1951թ. կոնվենցիային), ապա դիմումի վերաբերյալ կընդունվի միայն ապաստան տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշում: Դիմող անձը ՀՀ Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից ընդունված որոշման մասին տեղեկացվում է եռօրյա ժամկետում՝ այն ստանալով Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից կամ փոստի միջոցով:

Եթե հայցը բավարարվում է, և ՆԳՆ ՄՔԾ-ի որոշումը դրական է լինում, ապա անձին տրամադրվում է փախստականի կարգավիճակ: Այս պարագայում վերջինս, որպես նոր ճանաչված փախստական, կարող է դիմել ՄՍԾ՝ ինտեգրման պետական ծրագրերում ընդգրկվելու նպատակով: Այն պարագայում, երբ ՄՔԾ-ն մերժում է հայցը, տվյալ անձը ծանուցման պահից սկսած ՀՀ տարածքում գտնվում է՝ անկանոն միգրանտի կարգավիճակով և 60 օրերի ընթացքում մերժման որոշումը չբողոքարկելու դեպքում՝ պարտավորվում է լքել երկիրը:

Ապաստան հայցողն իրավունք ունի բողոքարկել մերժման որոշումը ՀՀ բոլոր դատական ատյաններում:

Վարչական դատարանը կարող է ընդունել հետևյալ վճիռը.

ա հայցը մերժել,

բ հայցը բավարարել,

գ չեղյալ համարել ՄՔԾ-ի որոշումը և պարտադրել ՄՔԾ-ին վերանայել որոշումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը կարող է ընդունել հետևյալ վճիռը.

ա բողոքը մերժել,

բ բողոքը բավարարել,

գ բեկանել ՀՀ վարչական դատարանի վճիռը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

ՀՀ Վճռաբեկ դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումը.

ա հայցադիմումը վերադարձնել ապաստան հայցողին՝ վճռաբեկ բողոքի հիմքեր չլինելու պատճառով,

բ բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վճիռը և փոփոխել այն,

գ բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վճիռը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրում որոշակի պատճառներով հետապնդման ենթարկված անձանց միջազգային պաշտպանություն են տրամադրում աշխարհի ավելի քան 140 պետություններ, որոնք միացել են ՄԱԿ-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ.-ի Ժնևի կոնվենցիային:

Հայաստանը 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունել է ապաստանի ոլորտը կարգավորող «Փախստականների և ապաստանի մասին» ազգային օրենքը, որում՝ «փախստական» ճանաչվելու համար 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված հինգ հիմքերի հետ մեկտեղ ամրագրվել են ևս հինգը՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, համատարած բռնություն, արտաքին հարձակում, ներքին հակամարտություններ, հասարակական կարգի լուրջ խախտումներ:
Այսինքն, այն անձինք, որոնք ստիպված են եղել լքել իրենց երկիրը վերջին հինգ հիմքերից որևէ մեկի պատճառով, Հայաստանում պաշտպանություն հայցելու դեպքում կարող են նույնպես ճանաչվել փախստական և ստանալ ապաստան:
Ապաստանի հայցի քննարկման ողջ ժամանակահատվածում (3 ամիս՝ ևս 3 ամիս երկարաձգելու հնարավորությամբ) ապաստան հայցողները բնակեցվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում: Կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսապահովման հիմնական կարիքները հոգալու համար, նրանց տրամադրվում է դրամական օգնություն՝ ապաստանի դիմում ներկայացնողին (գլխավոր դիմումատուին)՝ 20.000 ՀՀ դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:
Կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին սնունդ կամ հիգիենայի պարագաներ չեն տրամադրվում:

Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվելուց և ապաստան ստանալուց հետո Կենտրոնում բնակվող ապաստան հայցողը պարտավոր է ազատել սենյակը, իսկ դրամական օգնություն ստացողի դեպքում՝ օգնության տրամադրումը դադարեցվում է:
Հայաստանում ապաստան հայցողներն ու փախստական ճանաչվածները՝ պատշաճ փաստաթղթավորման դեպքում, ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ, մասնավորապես՝ անվճար իրավաբանական օգնության, կրթության, բուժօգնության, սոցիալական ապահովության, աշխատանքի, ազատ տեղաշարժի և այլ իրավունքներ:
Ապաստան հայցողները և փախստականները շարժական գույքի ձեռքբերման, տեղափոխման և անշարժ գույքի վարձակալության հետ կապված, ինչպես նաև գույքային այլ իրավահարաբերություններում օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված նույն իրավունքներից:
Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականները անշարժ գույքի ձեռքբերման և սեփականաշնորհման հետ կապված իրավահարաբերություններում օգտվում են օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված իրավունքներից:
Շատ կարևոր է ընդգծել, որ ապաստան հայցողներն ու փախստականները՝ օրենքով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելիս, պետք է հարգեն Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի քաղաքացիների և այլ անձանց օրինական շահերը, իրավունքներն ու ազատությունները, պահպանեն հասարակական կարգը և Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

Ապաստան հայցողի իրավունքները.

1. Ապաստան հայցողն իրավունք ունի ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն ստանալ Հայաստանի պետական սահմանի անցման կետում, եթե նա խնդրում է պաշտպանություն (ապաստան է հայցել):
2. Ապաստան հայցողը Հայաստանում օրինական գտնվելու իրավունք ունի՝ մինչև ապաստանի դիմումի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը, ներառյալ դատական կարգով (դատական ատյաններում) բողոքարկման գործընթացի ավարտը:
3. Ապաստան հայցողը ՄԱԿ ՓԳՀ-ին դիմելու իրավունք ունի:

4. Ապաստանի դիմումի քննարկման ընթացքում ապաստան հայցողն իրավունք ունի ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու, սնունդ ու հիգիենայի պարագաներ ստանալու, եթե կա ազատ տեղ:

5. Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում ազատ տեղ չլինելու դեպքում՝ ապաստան հայցողն իրավունք ունի բնակարան վարձակալելու նպատակով դիմելու ՄՔԾ՝ դրամական օգնություն ստանալու համար, ինչը նախատեսված է առավել խոցելի անձանց աջակցելու համար:

6. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխան ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում առաջնահերթության կարգով բնակվելու կամ օրենքով նախատեսված այլ հատուկ հաստատություններում տեղավորվելու, ինչպես նաև խնամակալ և ներկայացուցիչ ունենալու իրավունք ունի:

7. Հոգեկան առողջության հետ կապված կամ այլ առողջական խնդիրների դեպքում՝ ապաստան հայցողը ներկայացուցիչ ունենալու իրավունք ունի:

8. Ապաստան հայցողը Հայաստանի տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք ունի:

9. Հայաստան ապօրինի մուտք գործելու և այնտեղ ապօրինի գտնվելու համար ապաստան հայցողն իրավունք ունի քրեական կամ վարչական պատասխանատվության չենթարկվելու:

10. Ապաստան հայցողն իրավունք ունի Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու:

11. Ապաստան հայցողն իրավունք ունի անվճար օգտվելու հարցազրույցի ժամանակ իր նախընտրած սեռի թարգմանչի ծառայությունից:

12. Ապաստան հայցողներին վերապահված են շարժական գույքի ձեռքբերման, տեղափոխման, անշարժ գույքի վարձակալության հետ կապված, ինչպես նաև գույքային այլ գործարքների համար Հայաստանի քաղաքացիներին հավասար իրավունքներ:

13. Ապաստան հայցողն իրավունք ունի Հայաստանի քաղաքացիներին համահավասար աշխատանք փնտրելու և աշխատելու ցանկացած բնագավառում՝ բացառությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում առկա հաստիքների: Աշխատանքի իրավունքը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում ՄՔԾ-ի կողմից տրված ՀՀ-ում ապաստան հայցողի վկայականը և դրանից բխող օրենքով նախատեսված փաստաթղթերը:

14. Ապաստան հայցողն ունի Հայաստանի քաղաքացիներին հավասար հիմնական և բարձրագույն կրթություն ստանալու իրավունք:

15. Ապաստան հայցողն իրավունք ունի անվճար շտապ բուժօգնություն և ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն ստանալու, իսկ 18 տարին չլրացած անձինք նաև անվճար հիվանդանոցային բուժման հնարավորություն ունեն:

16. Ապաստան հայցողն իրավունք ունի բողոքարկելու ՄՔԾ-ի բացասական որոշումը դատական կարգով:

17. ՄՔԾ-ի մերժման որոշումը դատական կարգով բողոքարկելու համար՝ ապաստան հայցողն իրավունք ունի ազատվելու պետական տուրքի վճարումից:

18. Ապաստան հայցողն անձնական տվյալների պաշտպանության իրավունք ունի:

19. Ապաստան հայցողը չի կարող իր կամքին հակառակ վերադարձվել իր ծագման երկիր:

Ապաստան հայցողի պարտականությունները

1. Ապաստան հայցողը պարտավոր է համագործակցել ՄՔԾ-ի հետ՝ տրամադրելով լիարժեք և ճիշտ տեղեկատվություն:

2. Ապաստան հայցողը պարտավոր է ՄՔԾ ներկայացնել ունեցած բոլոր փաստաթղթերը:

3. ՄՔԾ-ի կողմից նշանակված օրվա նշանակված ժամին ապաստան հայցողը պետք է ներկայանա հարցազրույցի: Չներկայանալու պարագայում՝ նա պետք է բացակայության հարգելի պատճառ ներկայացնի ՄՔԾ:

4. Ապաստան հայցողի վկայականի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ ապաստան հայցողը պետք է դիմի ՄՔԾ՝ այն երկարաձգելու համար:

5. Ապաստան հայցողը պարտավոր է պահպանել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները:

6. Ապաստան հայցողը պարտավոր է պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

7. Ապաստան հայցողը պետք է վճարի բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, կատարի պարտադիր այլ վճարումներ, ինչպես Հայաստանի քաղաքացիները:

Փախստականների իրավունքները

1. Հայաստանում օրինական բնակության իրավունք

Հայաստանում փախստական ճանաչվելու դեպքում՝ անձին տրվում է օրինական բնակության իրավունք՝ առանց ժամկետային սահմանափակման, ինչպես նաև՝ համապատասխան փաստաթուղթ:

2. Վարձատրվող աշխատանքի և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք

Փախստականն ունի աշխատանքի, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Փախստականից չի պահանջվում դիմել աշխատանքի իրավունք ստանալու համար, ինչպես պահանջվում է մյուս օտարերկրացիներից: Նա իրավունք ունի աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ Հայաստանի քաղաքացիները, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով պարտադիր պահանջվում է ունենալ Հայաստանի քաղաքացիություն (օրինակ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատելու համար պարտադիր է Հայաստանի քաղաքացի հանդիսանալը):

3. Կրթության իրավունք

Հայաստանում փախստական ճանաչված անձինք կրթության հարցերում ունեն Հայաստանի քաղաքացիներին հավասար իրավունքներ: Նրանք իրավունք ունեն Հայաստանի պետական հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունել իրենց՝ 6 տարին լրացած երեխային կամ ավելի բարձր տարիքի երեխային: Փախստականը կարող է ընտրել այն հանրակրթական դպրոցը, որտեղ պետք է հաճախի իր երեխան: Պետական հանրակրթական դպրոցների ցուցակը հասանելի է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական վեբկայքում: Բարձրագույն կրթության (համալսարան, ինստիտուտ, ակադեմիա և այլ) հարցերում նույնպես փախստականն ունի Հայաստանի քաղաքացիներին համահավասար իրավունքներ:

4. Տեղաշարժի և բնակության վայր ընտրելու իրավունք

Փախստականը կարող է Հայաստանի ողջ տարածքում ազատ տեղաշարժվել և բնակության վայր ընտրել. դա իր իրավունքն է:
Հայաստանի տարածքից դուրս կարող է ճամփորդել իր վավեր կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթով՝ այդ երկիր մուտքի արտոնագիր (վիզա) ունենալու դեպքում:

5. Սեփականության իրավունք

Շարժական և անշարժ գույքի ձեռքբերման և սեփականության իրավունքի հետ կապված մյուս հարցերում փախստականն ունի Հայաստանի քաղաքացիների համար սահմանված նույն իրավունքները: Նա չի կարող ունենալ միայն գյուղատնտեսական նշանակության հողի սեփականության իրավունք, քանի որ ազգային օրենսդրությամբ հողի սեփականության իրավունք տրվում է Հայաստանի քաղաքացիներին և Հայաստանում կացության հատուկ կարգավիճակ ստացած օտարերկրացիներին:

6. Սոցիալական և առողջապահական իրավունքներ

Փախստականն իրավունք ունի Հայաստանի քաղաքացիներին համահավասար օգտվելու սոցիալական ծառայություններից, օրինակ՝ ստանալ պետական նպաստներ և դրամական օգնություններ, ինչպիսիք են՝ ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար հատկացվող նպաստները, կենսաթոշակը: Օրենքով սահմանված կարգով՝ իրավունք ունի ստանալու անվճար բժշկական օգնություն և սպասարկում, իսկ 18 տարին չլրացած անձինք նաև անվճար հիվանդանոցային բուժման հնարավորություն ունեն՝ ՀՀ օրենքին և կանոնադրությանը համապատասխան:

Փախստականի պարտականությունները

Փախստականն, իր իրավունքներից օգտվելիս, պետք է հարգի ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները և ազատությունները, պահպանի հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:
Նա պարտավոր է վճարել հարկեր, տուքեր և կատարել օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումներ:

Որոշ իրավունքների սահմանափակումներ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ փախստականը չունի ընտրելու իրավունք, չի կարող անդամագրվել ՀՀ որևէ կուսակցության, չի կարող ընտրվել կամ նշանակվել պաշտոնում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, չի կարող լինել հանրային ծառայող, չունի հողի նկատմամբ սեփականության իրավունք:

Փախստական ճանաչվելու և ապաստան ստանալու դեպքում՝ Անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանման կողմից տրամադրվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ, որը համարվում է լիարժեք և բավարար անձը հաստատող փաստաթուղթ և դրան կից օտարերկրյա քաղաքացիության անձնագիրը որևէ կառույցի ներկայացնելու կարիք չպետք է առաջանա: Այս փաստաթուղթը տալիս է Հայաստանում ազատ տեղաշարժվելու և Հայաստանից դուրս ճամփորդելու իրավունք (ճամփորդության երկրի մուտքի վիզա ունենալու դեպքում):

Փաստաթղթի գործողության ժամկետը 2 տարի է, որից հետո այն յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է 2-ական տարով:
Մինչև 16 տարեկան երեխայի (երեխաների) տվյալները լրացվում են տվյալ անձին տրված փաստաթղթում, բացի այդ ծնողի կողմից նման ցանկություն հայտնելու դեպքում երեխային կարող է տրամադրվել առանձին ճամփորդական փաստաթուղթ:

Անձը դադարում է փախստական լինել, եթե նա

- կամավոր ընդունել կամ վերականգնել է այն երկրի պաշտպանությունը, որի քաղաքացին էր,
- ձեռք է բերել ՀՀ կամ այլ երկրի քաղաքացիություն
- հանգամանքները, որոնց պատճառով դարձել է փախստական, դադարել են գոյություն ունենալ
- անձնական պատճառներով չի ցանկանում ճանաչվել փախստական
- Հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում ՀՀ ազգային անվտանգության համար կամ դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար:
- Եթե մեկնել է ՀՀ-ից և գտնվում է ՀՀ-ից դուրս կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի գործողության ժամկետից դուրս:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակավոր պաշտպանությունը մեկ այլ մեխանիզմ է, որը նախատեսված է արձագանքելու զանգվածային ներհոսքի իրավիճակներին՝ նախատեսելով միջազգային պաշտպանության խմբային եղանակ: Այս ընթացակարգը տրամադրում է անհապաղ ու ժամանակավոր պաշտպանություն, ինչպես նաև հիմնական աջակցություն, մինչև անհատները կարողանան վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր: Չնայած ժամանակավոր բնույթին, այս պաշտպանությունը ներառում է հումանիտար օգնության հասանելիություն և կանխում է հարկադիր վերադարձը, օրինակ՝ հակամարտության կամ մարդու իրավունքների զանգվածային խախտումներով երկրներ և կարող է երկարաձգվել:
Կառավարության կողմից ժամանակավոր պաշտպանության տրամադրման մասին որոշում ընդունելու դեպքում Հայաստանում կարող է ապաստան տրամադրվել օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց խմբերին, որոնք փախստականի կարգավիճակի հիմքերի առկայության հետևանքով լքել են իրենց, համապատասխանաբար, քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության տարածքները: Հայաստանի կողմից ժամանակավոր պաշտպանության տակ վերցված օտարերկրացիները ևս ճանաչվում են փախստական և ունեն փախստականների միևնույն իրավունքներն ու պարտականությունները:
Ի տարբերություն փախստականի կարգավիճակի կամ ապաստանի տրամադրմանը, որոնց վերաբերյալ որոշումը կայացնում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին որոշումն ընդունում է Կառավարությունը:
ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները բռնի տեղահանվել են իրենց մշտական բնակության երկրից համատարած բռնության և բռնության իրական սպառնալիքի, արտաքին հարձակման, միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների զանգվածային խախտումների, հասարակական կարգը խախտող իրադարձությունների, Ադրբեջանի Հանրապետության հայատյաց, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին էթնիկ զտման ենթարկելու քաղաքականության պատճառով, և Լեռնային Ղարաբաղի բնակիչները հնարավորություն չունեն ներկայումս վերադառնալու իրենց մշտական բնակության երկիր, 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշմամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց վերցրել է ժամանակավոր պաշտպանության տակ: Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձանցից չի ընդունել ապաստանի անհատական հայցեր, այլ ստուգել է վերջիններիս տվյալների համապատասխանությունը այդ խմբին ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին Կառավարության որոշման պահանջներին:

Պետք է ընդգծել, որ եթե արձանագրվում է, որ տվյալ անձը չի համապատասխանում ժամանակավոր պաշտպանության մասին Կառավարության որոշման պահանջներին, ապա նա պահպանում է ապաստանի անհատական հայց ներկայացնելու իր իրավունքը:

Ապաստանի հիմքով փախստականի կարգավիճակի և ժամանակավոր պաշտպանության տարբերությունները՝

Ապաստանի հիմքով փախստականի կարգավիճակ

- Անհատական հիմք
- Դիմում
- Անժամկետ
- ՄՔԾ որոշում
- Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ

Ժամանակավոր պաշտպանություն

- Խմբային հիմք
- Հաշվառում
- Ժամանակավոր
- Կառավարության որոշում
- Ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ

Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող ***փաստաթղթերն են՝***

- Անձնագիրը, որն իր նկարագրով համապատասխանում է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված անձնագրի նկարագրին, սակայն ծածկագիրը տպագրվում է (կամ տպագրված է) բացառապես **070** ծածկագրով.
- Ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը:

Նշված փաստաթղթերը ՀՀ-ից դուրս գալիս և ՀՀ մուտք գործելիս վավեր են միայն միասին գործածելու պարագայում: Տրվում է ՀՀ ՆԳՆ ՄՔԾ տարածքային կենտրոններում և ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական և հյուպատոսական ծառայություններում:

Անձնագրի առկայությունն առերևույթ ենթադրում է, որ անձն անձնագիրը թողարկող երկրի քաղաքացի է, եթե անձնագրում այլ բան նշված չէ: Ավելին, քաղաքացիությունը կարող է ապացուցվել անձնագիր ունենալով: Այդուամենայնիվ, միջազգային իրավունքում արձանագրվել են իրավիճակներ, երբ պետությունը, իբրև բարի կամքի դրսևորում, առաջարկել է իր անձնագիրը մի տարածքի բնակիչների, որը միջազգայնորեն ճանաչված չէ: Դրա նպատակն է ապահովել այդ մարդկանց նվազագույն իրավունքները: Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճռում ՀՀ կառավարությունը պարզաբանում է, որ երկկողմանի համաձայնագրի (1999) հիման վրա ԼՂ բնակիչներին շնորհվել է ՀՀ անձնագիր ճամփորդության նպատակով (ՄԻԵԴ վճիռը՝ հավելվածում): Նույն համաձայնագրով նախատեսվել է, որ անձնագիրը չի ենթադրում քաղաքացիություն: Ըստ Համաձայնագրի կիրառման ԼՂ բնակիչներին հայկական անձնագիր տրվել է միայն բացառիկ դեպքերում, երբ արտերկիր մեկնելու նպատակը բժշկական, կրթական կամ այլ անձնական հարց է:

Կարևոր է ընդգծել, որ Հայաստանում միջազգային պաշտպանություն ստացած անձանց՝ այլ երկրում ներկայացված միջազգային պաշտպանության հայցը (ապաստանի հայցը) դիտարկվում է որպես ապահով երկրից (կոնկրետ դեպքում՝ ՀՀ) ժամանած անձի հայց և ենթակա է մերժման: Պատճառն այն է, որ նրանց համար Հայաստանը համարվել է առաջին ապահով երկիրը, որն արդեն իսկ տրամադրել է անհրաժեշտ պաշտպանություն: ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի լուծման նպատակով ՀՀ կառավարությունը 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատվել է պետական աջակցության ծրագիրը, որն իրականացվում է աջակցության հետևյալ եղանակներից որևէ մեկով ՝

- ա բնակարանի (կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի) կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում,
- բ անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում,
- գ գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն:

Հարցեր քննարկման համար

1 *Ի՞նչ են նշանակում «անօրինական միգրացիա» և «չվերադարձելիության սկզբունք» տերմինները:*

2 *Որո՞նք են ապաստան հայցողների և փախստականների իրավունքներն ու պարտականությունները:*

Թեմա 4

Միգրանտների ինտեգրման առանձնահատկությունները. լեզվական ինտեգրում, կրթության հասանելիություն

Միգրացիան անհատների և խմբերի միջև անկանխատեսելի կամ պարտադրված փոխազդեցությունների բարդ գործընթաց է: Այս փոխհարաբերությունները հաճախ տեղի են ունենում մարդկանց միջև, որոնք իրենք իրենց համարում են միմյանցից տարբեր և իսկապես մշակութային առանձնահատկությունների առումով տարբեր են: Պետությունները և հաստատությունները կարող են կիրառել տարբեր ռազմավարությունների մի ամբողջ շարք՝ կառավարելու համար միգրացիայից բխող հասարակական բազմազանությունը: Եթե առաջ կար ակնկալիք, որ միգրանտները կձուլվեին ընդունող հասարակության հետ, ինչով էլ պայմանավորված հաստատությունները քիչ աշխատանքներ էին իրականացնում միգրանտների և ընդունող հասարակությունների միջև հարաբերությունների հեշտացման համար, այնուամենայնիվ, ներկայումս ինտեգրումը խթանող քաղաքականությունների կարևորությունը լայնորեն ընդունված է:

Պետական քաղաքականության տեսակները՝ միգրացիայից բխող բազմազանությունը կառավարելու տեսանկյունից տարբեր են:

Բազմամշակութային քաղաքականության պարագայում՝ ընդգծվում են հավասար իրավունքներն ու հնարավորությունները բոլոր մշակութային խմբերի դեպքում, և չի լինում որևէ դոմինանտ մշակութային խումբ:

Ասիմիլյացիոն քաղաքականության պարագայում՝ գաղափարը հետևյալն է. որ երբ, օրինակ, Հռոմում ես, արա այնպես, ինչպես անում են հռոմեացիները, եթե ո՛չ, ապա տառապիր հետևանքներից:

Ինտեգրող կամ միջմշակութային քաղաքականության պարագայում՝ գործ ունենք քաղաքականության հետ, որը նախորդ երկու քաղաքականությունների բազմամշակութայինի և ասիմիլյացիոնի միջև է գտնվում, հետևաբար ենթադրում է իրավունքներ և պարտականություններ՝ բոլոր կողմերի համար:

Ինտեգրումը կարող է նաև ներառել միջմշակութային մոտեցումներ, որոնք աջակցում են միջմշակութային երկխոսությունների կայացմանը՝ հիմնվելով մշակութային տարբերությունների և նմանությունների ճանաչման վրա:

Տարանջատման քաղաքականության պարագայում՝ գործ ունենք միգրանտների մարգինալացման հետ, միգրանտների ՝ընդունող հասարակությունից ֆիզիկական առանձնացման հետ, որոնք ուղեկցվում են միգրանտների կարիքների անտեսմամբ: Այս քաղաքականության դեպքում՝ ոչինչ չի պահանջվում միգրանտներից և միևնույն ժամանակ ոչ մի աջակցություն չի տրամադրվում միգրանտներին:

Վերը թվարկված քաղաքականությունները կարող են կիրառվել կառավարությունների կողմից՝ միգրացիայից բխող բազմազանությունը կառավարելու համար, և քաղաքականությունները ցույց են տալիս, թե ինչպես է յուրաքանչյուր քաղաքականություն իրականացնում միգրանտների ինտեգրման կամ տարանջատման գործընթացները ընդունող հասարակության մեջ: Ինտեգրման հասկացությունը դժվար է սահմանել, քանի որ չկա համընդհանուր և իրավաբանական պարտադիր ուժ ունեցող սահմանում: Ինտեգրացիայի քաղաքականությունները կարող են տարբեր լինել՝ սկսած «ասիմիլյացիային մոտ մոդելից» մինչև բազմամշակութային մոդել, քանի որ երկրները տարբերվում են իրենց միգրացիոն ավանդույթներով և/կամ ինտեգրման կառավարման մոտեցումներով: Պրակտիկորեն ինտեգրման գործնական մեկնաբանությունները տարբեր երկրներում կարող են զգալիորեն միմյանցից տարբեր լինել:

Ինտեգրումը համալիր գործընթաց է, որը տարբեր կազմակերպությունների կողմից տարբեր կերպ է սահմանվում: ՄՄԿ-ն (IOM) սահմանում է ինտեգրումը՝ որպես գործընթաց, որի միջոցով միգրանտները հասարակությունում դառնում են ընդունված անհատներ և խմբեր: Միգրանտներին ներկայացվող պահանջները տարբեր հասարակություններում տարբեր են, և ինտեգրման պատասխանատվությունը դրված չէ միայն մեկ դերակատարի վրա: Ինտեգրման գործընթացի դերակատարները հենց միգրանտներն են, ընդունող երկրի կառավարությունն է, հաստատություններն ու համայնքներն են:

ՄԱԿ ՓԳՀ-ն (UNHCR) սահմանում է ինտեգրումը՝ որպես դինամիկ և բազմաբովանդակ երկկողմանի գործընթաց, որն ունի երեք փոխկապակցված չափանիշներ՝ իրավական, տնտեսական և սոցիալ-մշակութային: Ինտեգրումը պահանջում է բոլոր կողմերի ջանքերը, այդ թվում՝ փախստականների պատրաստակամությունը՝ հարմարվելու ընդունող հասարակությանը՝ առանց մշակութային ինքնությունից հրաժարվելու, և ընդունող համայնքների և հանրային հաստատությունների կողմից համապատասխան պատրաստակամության դրսևորումը՝ ընդունելու փախստականներին և բավարարելու միգրանտների կարիքները: ՄԱԿ ՓԳՀ-ի (UNHCR) սահմանման հիմքում այն գաղափարն է, որ ինտեգրումը երկկողմանի գործընթաց է, որը հիմնված է մեկ կողմի «հարմարվելու» և մյուսի կողմի «ընդունման» վրա, ինչը չի նշանակում, որ միգրանտին ներկայացվում է պահանջ՝ հրաժարվելու սեփական մշակութային նույնականությունից:

ՄՄԿ-ն և ՄԱԿ ՓԳՀ-ն (UNHCR) մշակել են ինտեգրման համապարփակ սահմանումներ, որոնք արտահայտում են իրենց համապատասխան կազմակերպությունների մանդատները և միգրանտների ու փախստականների հատուկ կարիքները:

Ինտեգրումը գործընթաց է, որի արդյունքում միգրանտներն ընդունվում են հասարակության կողմից և որպես անհատներ, և որպես խմբեր: Ընդունող հասարակության կողմից ներկայացվող պահանջները մեծապես տարբեր են երկրից երկիր և ինտեգրման պատասխանատվությունը ոչ միայն չի կրում միայն մեկ խումբ, այլ կրում են շատ դերակատարներ՝ հենց ներգաղթյալները, հյուրընկալող կառավարությունը, հաստատությունները և համայնքները:

Ինտեգրման գործընթացներն ապահովում են միգրանտների կողմից ընդունող հասարակություններում փոփոխությունների և զարգացման խթանումը, որն էլ հանգեցնում է մեծ բազմազանության: Իսկ բազմազանության ճանաչումը դառնում է ինտեգրման գործընթացի կարևոր մաս, քանի որ հաճախ պահանջում է պետության մասին հիմնական գաղափարների փոփոխություն, որոնք արտացոլվում են իրականացվող քաղաքականություններում և ծրագրերում, որն էլ միաժամանակ պահանջում է փոփոխություններ նաև միգրանտների մտածողության ոճի և ինքնությունների մեջ:

Ինտեգրման գործընթացը սկսվում է այն պահին, երբ միգրանտները ժամանում են նոր երկիր: Միգրանտներն առավել հաճախ դժվարանում են հարմարվել նոր իրողություններին:

Նրանք սովորաբար ամենից շատ հետաքրքրված են իրենց առաջնային կարիքների՝ անվտանգության, սննդի և բնակարանի կարիքի բավարարմամբ, որից հետո փորձում են բավարարել սոցիալական, մշակութային և քաղաքական կարիքները: Կարիքները կարող են բավարարվել, եթե միգրանտները ընդունվեն ընդունող հասարակության կողմից: Ինտեգրման միջոցով միգրանտները ներգրավվում են կյանքի տարբեր ոլորտներում՝ աշխատանք, կրթություն, բնակարան, քաղաքական ու մշակութային գործունեություն և այլն:

Անհատական և ինստիտուցիոնալ գործոնները կարևոր դերակատարում ունեն ինտեգրման գործընթացում: Ինտեգրումը կախված է մարդկանց, հաստատությունների աջակցությունից և ներգրավվածությունից, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են միգրանտի իրավիճակի վրա: Կան նաև ընդունող երկրում մի շարք խմբեր, որոնք կարևոր դեր ունեն միգրանտների ինտեգրման գործընթացում, ներառյալ նրանք, որոնք ունեն սեփական ռեսուրս կամ պետական, որոնք կարող են օգնություն տրամադրել բնակության վայրի, աշխատանքի, հասանելի ծառայությունների, տեղեկատվության, խորհրդատվության և սոցիալական ցանցերի տեսքով, ինչպես նաև նրանք, որոնք ստեղծում են ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կարող են հանգեցնել միգրանտի ներգրավմանը կամ բացառմանը:

Ինտեգրման գործընթացում ամենակարևոր խնդիրներից է համարվում լեզվական ինտեգրումը, քանի որ այն կարող է խոչընդոտ հանդիսանալ ինտեգրման համար՝ մասնավորապես տարբեր ծառայություններից օգտվելու, համայնքի բնակիչների հետ շփման, իրազեկված լինելու, ամենակարևորը՝ աշխատանք գտնելու և այլ հարցերի հետ կապված:

Կարևոր է նաև նշել, որ ընտանեկան վերամիավորումը դարձել է բազմաթիվ երկրներում միգրացիայի հիմնական պատճառներից մեկը: Ընտանեկան վերամիավորումը վերաբերում է այն իրավիճակին, երբ ընտանիքի անդամները միանում են այլ երկրում արդեն ապրող և աշխատող ընտանիքի անդամին՝ կանոնավոր կարգավիճակով: Ընտանեկան վերամիավորումը կարող է կարևոր դեր ունենալ միգրանտների ինտեգրման հարցում մի քանի պատճառներով, այդ թվում՝

- միգրանտները հատկապես խոցելի են, երբ իրենց ընտանիքից բաժանված են,
- ընտանիքից բաժանվելը կարող է բացասաբար ազդել միգրանտների հոգեբանական վիճակի վրա,
- ընտանեկան վերամիավորումը կարող է օգնել միգրանտներին զարգացնել սոցիալական կապեր համայնքի հետ և հնարավորություն տալ միգրանտներին մուտք ունենալ տարբեր խմբեր,
- ընտանեկան վերամիավորումը կարևոր է երեխաների զարգացման համար,

- ընտանիքի հետ մեկտեղ միգրացիայի հնարավորությունը կարող է խթանել միգրանտներին, որպեսզի ձգտեն լինել բարձր որակավորում ունեցող աշխատողներ
- միգրանտ աշխատողի ընտանիքի առկայությունը կարող է դրականորեն ազդել նրանց աշխատունակության վրա,
- փախստականների համար ընտանիքի վերամիավորումը կարող է լինել միակ միջոցը, որն ապահովում է ընտանիքի միասին լինելը:

Լեզվի և ինտեգրման պահանջները կարևորելով՝ Եվրամիության անդամ պետություններից տասնհինգը ներդրել են լեզվաբառարանների և ինտեգրման (քաղաքացիական գիտելիքների իմացության) թեստեր՝ մշտական կամ երկարաժամկետ բնակության իրավունք ստանալու պահանջների շրջանակում: Սակայն միայն մի քանի երկիր է առաջարկում անվճար դասընթացներ, որոնք օգնում են միգրանտներին նախապատրաստվել այդ թեստերին: Անվճար դասընթացներին հասանելիությունը կարող է էապես բարելավել ու նպաստել միգրանտների ինտեգրմանը: Պետությունները, որոնք ներդրել են նման թեստեր և քննություններ, սովորաբար ունենում են նաև որոշակի բացառություններ՝ սահմանված հստակ ընտրված խոցելի խմբերի համար, որոնց թվում են, օրինակ, տարեցները:

Հանրակրթական մարմիններն աջակցում են նրանց երեխաների անվճար դպրոց հաճախելու հարցում: Բարձրագույն կրթություն ստանալու համար, ինչպես ՀՀ քաղաքացիների պարագայում, պետք է դիմեն նախընտրած մասնագիտության գծով նախընտրած ուսումնական հաստատություն՝ ըստ ընթացակարգի: Ելնելով վերոնշվածից՝ կարելի է ընդգծել, որ ապահովվում է միգրանտների կրթության իրավունքը:

Հարցեր քննարկման համար

1 *Միգրանտների ինտեգրման հետ կապված ինչ առանձնահատկություններ կան:*

2 *Ինչ կարևորություն ունի լեզվական ինտեգրումը:*

Թեմա 5

Միգրանտների աշխատանքային զբաղվածության խնդիրների շրջանակը

Միգրանտներն ընդունող երկրում ունենում են մի շարք խնդիրներ իրենց կեցության ապահովման համար, որն անմիջականորեն կապված է աշխատանք ունենալու հետ, ուստի առաջնահերթ վերջիններս ունենում են աշխատանք գտնելու հարցում աջակցության կարիք: Միգրանտն՝ ինքն իր և իր ընտանիքի ապրուստն ու ծախսերը հոգալու համար առաջնահերթության կարգով կարիք ունի կայուն եկամտի աղբյուրի: Ցավոք, միգրանտների համար վստահելի աշխատանք գտնելը կարող է հաճախ չափազանց դժվար լուծվող խնդիր լինել:

Ընդունող երկրի աշխատաշուկայում միգրանտների ինտեգրման համար կան մի շարք հնարավոր խոչընդոտներ, որոնցից են՝

- լեզու, ներառյալ գրագիտությունը, հատկապես կոնկրետ մասնագիտության հետ կապված,
- ընդունող երկրում աշխատանքային փորձի բացակայությունը,
- ընդունող երկրում աշխատանքային զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,
- վերապատրաստման, կրթական և մասնագիտական համապատասխան որակավորումների բացակայությունը,
- այն ցանցերին հասանելիության բացակայությունը, որոնք կարող են մեծացնել զբաղվածության հեռանկարների և տեղեկատվության հավաքագրման մեթոդների իմացությունը,
- կոնկրետ հաստիքի կամ աշխատատեղի համար անհրաժեշտ աշխատանքային փորձի իմացության/իրազեկվածության բացակայությունը,
- աշխատանքային և սոցիալական ոլորտի օրենսդրության, ընդունող երկրի զբաղվածության ոլորտի և աշխատանքի ընդունման ընթացակարգերի ոչ բավարար հասկացվածությունը,
- միջմշակութային տարբերություններին, մշակութային նրբություններին չտիրապետելը,
- աշխատանքային շահագործումը,
- անորոշությունը՝ կյանքի և աշխատանքային հեռանկարների բացակայության պատճառով,

- խտրականություն, կարծրատիպեր, ոտնձգություն, աշխատանքային և անվտանգային պայմանները չպահպանել և աշխատանքային իրավունքների խախտում, որոնք կարող են խոչընդոտել աշխատանքի ընդունմանը և իրավունքների պահպանմանը,
- ձանձրույթ և հիասթափություն, որը դառնում է ինքնագնահատականի կորստի պատճառ (աշխատանքային զբաղվածության բացակայություն՝ հատկապես մասնագետների համար),
- աշխատանքից ազատման սպառնալիքներ:

Աշխատաշուկայում միգրանտների կարգավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել ինտեգրման կամ հարմարման հաջողված այլ փորձերից որոշ գործոններ՝

- գոյություն ունեցող քաղաքականությունների և հաստատությունների միջև համակարգվածության ապահովում,
- ընդունող պետության աշխատաշուկայի իրողությունների հաշվառում,
- տեղական մակարդակի ճանաչում. տարբեր պետական և ոչ պետական դերակատարների մասնակցայնության ապահովում ազգային և տեղական մակարդակներում:

Պետական հաստատություններն աշխատաշուկայում միգրանտների ինտեգրմանը աջակցելու համար կարող են ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

- ապահովել աշխատաշուկայի և համապատասխան պայմանների մասին տեղեկատվությանը առցանց հասանելիություն,
- նպաստել միգրանտների հմտությունների և մասնագիտական պատրաստվածության զարգացմանը (սա կարող է ներառել մասնագիտացման դասընթացներ, դասընթացներ, որոնք տրամադրում են տեղեկատվություն մշակույթի, իրավական դաշտի, պրակտիկ հարցերի, ինչպես նաև մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման վերաբերյալ),
- հավասարեցնել միգրանտների և քաղաքացիների կարգավիճակները՝ ապահովելով պետական ծառայություններին հավասար հասանելիություն և տալ միգրանտներին իրավունք՝ աշխատելու, սոցիալական աջակցություն ստանալու և հասցեագրել աշխատաշուկայում միգրանտ կանանց, երիտասարդ միգրանտների, անօրինական և սեզոնային միգրանտների աշխատանքային իրադրությունը:

- ընդունող երկրի, ծագման երկրի կամ համագործակցության միջոցով երկու երկրների պետական ծրագրերի միջոցով նվազեցնել գործազրկությունը/ բարելավել միգրանտների աշխատունակությունը,

Կարևոր է նշել, որ շատ հաճախ միգրանտները ցանկանում են զբաղվել ձեռնարկատիրությամբ, բիզնես ունենալ, որը հաճախ դառնում է աշխատաշուկայում նոր մարտահրավերների, տնտեսության զարգացման հիմք:

Միգրանտների ձեռնարկատիրությունը և ինքնազբաղվածությունը խթանելու պատճառները ներառում են հետևյալը՝

- միգրանտները հաճախ ավելի հակված են վարելու սեփական բիզնես, քան տեղաբնակները,
- միգրանտները ստեղծում են իրենց «սեփական» աշխատատեղերը. Նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելը կարող է նրանց տալ ուժեղանալու և անկախանալու զգացում,
- միգրանտների ձեռնարկատիրությունը եկամտով է ապահովում պետական լեզվի իմացության խնդիր ունեցող և ընդունող երկրի այլ իրավական նորմերի վերաբերյալ սահմանափակ գիտելիքներ ունեցողներին,
- այն եկամտով է ապահովում ավելի մեծ ընտանիքներին, որոնք ներգրավված են ընտանեկան գործերում,
- միգրանտների ձեռնարկատիրությունը կարող է ներառել բարձր որակավորմամբ միգրանտներին, որոնց եկամուտները կարող են բարձր լինել,
- այն կարող է տարբեր մարդկանց, այդ թվում՝ հաճախորդներին, պաշտոնյաներին և գործարար գործընկերներին, ընձեռել համագործակցության հնարավորություն,
- այն տրամադրում է ապրանքներ և ծառայություններ, որոնք հնարավոր է գոյություն չունեն կամ սահմանափակված են,
- այն կարող է ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր,
- այն կարող է խթանել բիզնեսի համագործակցությունը ծագող երկրների հետ և համաշխարհային մակարդակում:

Ապաստան հայցողներն իրավունք ունեն ՀՀ տարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Փախստականներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Հարցեր քննարկման համար

1 *Աշխատանքի և զբաղվածության տեսանկյունից ինչ խոչընդոտներ կան միգրանտների ինտեգրման համար:*

2 *Ո՞ր գործոնները կարող են խթան հանդիսանալ միգրանտների ձեռնարկատիրությամբ զբաղվելու և ինքնազբաղվածության համար:*

Թեմա 6

Միգրանտների բնակարանային ապահովման և սոցիալական ծառայությունների հասանելիությունը

Անդրադառնալով ընդունող երկրում միգրանտների շրջանում ունեցած խնդիրներին՝ անհրաժեշտ է ընդգծել բնակարանային հարցերը, քանի որ միգրանտները հատկապես խոցելի են բնակարանային ապահովման տեսանկյունից՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- միգրանտները կախում ունեն վարձակալության մասնավոր շուկայից, որն ավելի քիչ ապահով է և ավելի թանկ, քան սոցիալական բնակարանները,
- միգրանտները բախվում են ավելի լուրջ խոչընդոտների սոցիալական բնակարանների և բնակարանային ապահովման աջակցություն ստանալիս, որն էլ իր հերթին բարդացնում է պետական բնակարանային ապահովման ծրագրերին մասնակցելու հավանականությունը կամ սպասման հերթացուցակներում ընդգրկվելու հնարավորությունը,
- միգրանտները հաճախ ապրում են ոչ ստանդարտ պայմաններում՝ գերբնակեցված և ենթակառուցվածքների առումով վատ տեղադիրք ունեցող բնակավայրերում,
- միգրանտներն ունենում են անօթևանության բարձր մակարդակ, ներառյալ թաքնված անօթևանությունը,
- միգրանտները, որպես կանոն, ունեն սահմանափակ տնտեսական ռեսուրսներ և վատ հասանելիություն ֆինանսներին, ինչը սահմանափակում է նրանց բնակարանային ապահովման հնարավոր տարբերակները,
- միգրանտներն առավել հաճախ անտեղյակ են իրենց իրավունքներից և ունենում են դժվարություններ լեզվի և դրանից բխող հարակից խնդիրների պատճառով:

Այս համատեքստում գոյություն ունի միգրանտների խտրականության երեք լայն կատեգորիա.

- տանտիրոջ կողմից միգրանտին՝ միգրանտ լինելու հիմքով մերժելը,
- լրացուցիչ ֆինանսական և (կամ վարչական պահանջների ներկայացումը, որը հայտնի է՝ որպես «խտրական հավելավճարներ» /ենթադրյալ վարձակալ-միգրանտի նկատմամբ խտրական վերաբերմունք է, քանի որ մասնավոր վարձակալությունը նրա համար դառնում է անհասանելի),
- միգրանտներին անորակ կացարանները վարձակալական հիմունքներով տալը (նման դեպքերը ևս խտրական վերաբերմունքի դրսևորում են, քանզի օգտվում են միգրանտի իրավական չտեղեկացվածությունից):

Ինչ վերաբերում է սոցիալական բնակարաններին, ապա դրանք պետության կողմից, որպես կանոն, տեղական ինքնակառավարման մարմինների բնակարանային ապահովման ծրագրերի միջոցով տրամադրվող բնակարաններն են: Սոցիալական բնակարաններն ընդգրկում են ժամանակավոր կամ շտապ բնակարանները, որոնք կարող են տրամադրվել անհատներին կամ ընտանիքներին, որոնք անօթևան են կամ նոր ժամանած միգրանտներ են: Այս կացարանները կարող են տրամադրվել երեխաների խնամքի հաստատություններում, հանրակացարաններում կամ հյուրանոցներում, որոնք վարձակալվել են կամ պատկանում են պետությանը: Նմանատիպ կացարաններ տրամադրում են նաև բարեգործական կազմակերպությունները՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միգրանտ խմբերը հաճախ մեծապես կենտրոնացած են սոցիալապես անապահով թաղամասերում, ինչն ունենում է մարգինալացման զգալի վտանգ: Հետևաբար, ուշադրություն պետք է դարձնել, թե ինչպես են հատկացվում սոցիալական բնակարանները՝ նպատակ հետապնդելով նվազեցնել միգրանտների մարգինալացման ռիսկը:

Վերը նշված և այլ խնդիրներից խուսափելու համար հարկ է նշել, որ սոցիալական աշխատողներն ունեն եզակի կարգավիճակ՝ դյուրացնելու միգրանտների համար ռեսուրսներին հասանելիությունը, կառավարելու միգրանտների դժվարին հարմարեցումը և բավարարելու նրանց հիմնական կարիքները: Սոցիալական աշխատողները մասնագիտացած են համայնքային ռեսուրսներն օգտագործելու հարցում և կարող են օգնել միգրանտներին գտնելու բնակարան նոր վայրում:

Շատ միգրանտներ տեղափոխվում են ընդունող երկիր ֆինանսական խնդիրների կամ հոգեսոցիալական այնպիսի սթրեսների ենթարկվելու պատճառով, ինչպիսիք են բռնությունն

ընտանիքում կամ համայնքում, որն էլ պատճառ է հանդիսանում, որ վերջիններս չեն կարողանում լուծել իրենց խնդիրները, այդ թվում՝ բնակարանային հարցերը, որոնց դեպքում սոցիալական աշխատողը կարող է ունենալ մեծ դերակատարում: Նոր վայրի փնտրտուքը, որը կարելի է կոչել տուն, որը և՛ անվտանգ է, և՛ մատչելի, կարևոր խնդիր է, որը կարող են լուծել սոցիալական աշխատողները: Սոցիալական աշխատողների մեծամասնությունն ունի հասանելիություն ռեսուրսներին, որոնք ընդգրկում են ծառայությունների ամբողջ ծավալը, որն էլ տալիս է հնարավորություն՝ ամբողջությամբ լուծելու միգրանտներին հանդիպող բնակարանային անկայունության խնդիրը:

Բնակարանային պայմանների հիմնական փիլիսոփայությունը բոլորի համար բավական պարզ է, բայց համարժեք բնակարանը շատ ավելին է, քան պարզապես ֆիզիկական ապաստան լինելը: Համապատասխան բնակարանը պետք է համապատասխանի շահառուների մի շարք կարիքներին, ներառյալ տրանսպորտի հասանելիությանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված կացարանների խելամիտ լուծումներին, դպրոցներին, աշխատավայրերին և ընտանիքին մոտ լինելուն:

Բնակարանային քաղաքականության փորձագետները սահմանել են այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է լինեն, որպեսզի բնակարանը համարժեք համարվի:

Բնակարանը պետք է լինի ապահով, այսինքն անվտանգությունը էական պահանջ է համապատասխան բնակարանային պայմանների համար: Տները պետք է կառուցվածքային առումով ամուր լինեն և տեղակայված լինեն այնտեղ, որտեղ անհատները կարող են ապահով կերպով զբաղվել առօրյա կյանքով: Բացի այդ, բնակիչները պետք է երկարաժամկետ մուտք ունենան իրենց տներ՝ առանց վտարման մշտական սպառնալիքի: ***Բնակարանը պետք է լինի հասանելի,*** այսինքն բնակարանային հարմարությունները պետք է ունենան խելամիտ լուծումներ և լինեն մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այն ներառում է բնակարանի ֆիզիկական պայմանները, տրանսպորտին մոտ լինելը և հավելյալ աջակցության ծառայությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել տվյալ անձին: ***Բնակարանը պետք է լինի մատչելի,*** բնակարանային ծախսերը չպետք է գերազանցեն ընտանիքի եկամտի 30%-ը: Բացի այդ, պետք է գործի պետական այնպիսի քաղաքականություն, որը թույլ կտա վարձավճարի ճկունություն՝ եկամուտների կորստի դեպքում: Բնակարանը, որը համապատասխանում է վերը թվարկված պահանջներին, պետք է հասանելի լինի միգրանտներին: Բոլորը պետք է մուտք ունենան բնակարաններ՝ անկախ տարիքից, ռասայից, սեռից, սեռական կողմնորոշումից, ազգությունից, միգրանտի կարգավիճակից, օրինական եկամուտից և այլ հանգամանքներից:

ՄՔԾ-ի ենթակայության տակ կա ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն, և ազատ սենյակների առկայության դեպքում կարող է տրվել հանրակացարանային սենյակ: Սենյակ տրամադրելու հարցը քննության է առնվում, և սենյակ հատկացվում է ՄՔԾ-ի կողմից համակարգվող համապատասխան աշխատանքային խմբի կողմից:

ՄՔԾ-ի ենթակայությամբ գործող ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը նախատեսված է՝ Հայաստանում ապաստան հայցող անձանց և նրանց ընտանիքի անդամների բնակության համար: Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող անձանց տեղաշարժի ազատությունը չի սահմանափակվում: Եթե անձը ցանկանում է բնակվել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, ապա պետք է ապաստանի դիմումի մեջ նշի այդ մասին կամ ներկայացնի առանձին դիմում: Դիմում ներկայացնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում ՄՔԾ-ն կտրամադրի ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու մասին ուղեգիր, եթե այնտեղ համապատասխան ազատ սենյակ լինի: Սենյակ հատկացնելիս կացարանի տնօրենի կողմից հաշվի կառնվեն ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ: Միևնույն ընտանիքին չպատկանող տարբեր սեռի անձինք միևնույն սենյակում չեն բնակեցվում: Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ողջ ընթացքում տրամադրվում է սնունդ, անկողնային պարագաներ, անձնական հիգիենայի պարագաներ: Սպառված էլեկտրաէներգիայի, գազի և ջրի դիմաց տվյալ անձը վճարումներ չի կատարում: Երբ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում ազատ սենյակ առկա չի լինում, ուղեգիր չի տրվում: Այդ կամ ցանկացած այլ դեպքում, երբ որևէ պատճառով հնարավոր չէ սենյակ հատկացնել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, ապա անձն իրավունք ունի դիմելու՝ դրամական օգնություն ստանալու համար՝ բնակարան վարձակալելու նպատակով: Դրամական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է ՄՔԾ ներկայացնել սահմանված ձևի դիմում:ՄՔԾ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցներից կազմված աշխատանքային խումբը ուսումնասիրություն է իրականացնում, գնահատում հիմնական կարիքները՝ այցելելով փաստացի բնակության վայր, այնուհետև դիմումի վերաբերյալ կայացնում որոշում՝ ըստ սահմանված չափորոշիչների, քանի որ աջակցության այս տեսակը նախատեսված է առավել խոցելի անձանց համար: Դրամական օգնությունը տրամադրվում է երեք ամիս ժամկետով, իսկ եթե ապաստանի դիմումի քննարկման ժամկետը երկարաձգվել է, ապա մինչև դիմումի քննարկման ավարտը (առավելագույնը վեց ամիս): Այս դեպքում հիգիենայի պարագաներ և սնունդ չի տրամադրվում:

Դրամական օգնություն չի կարող տրամադրվել, եթե՝

- ապաստանի դիմումը ՄՔԾ-ի կողմից մերժվել է՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված արագացված ընթացակարգով,
- ապաստանի դիմումը մերժվել է, և անձը ներկայացրել է ՀՀ-ում ապաստանի տրամադրման նոր դիմում,
- հրաժարվել է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում կամ այլ կացարանում բնակվելու առաջարկից,
- նախկինում բնակվել է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում և ազատել է զբաղեցրած տարածքը՝ բնակության ժամկետը լրանալու կապակցությամբ,
- նախկինում բնակվել է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, սակայն տրված ուղեգիրը ՄՔԾ-ի կողմից ուժը կորցրած է ճանաչվել՝ անհարգելի բացակայության կամ բնակության ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով,
- որպես առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա կամ էլ հատուկ կարիք ունեցող այլ անձ, տեղավորվել է այնպիսի հաստատությունում, որտեղ ապահովվում են կենսաապահովման հիմնական կարիքները:

Դրամական օգնության տրամադրումը կդադարեցվի, եթե՝

- ՄՔԾ-ի կողմից հատկացվել է սենյակ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում կամ այլ վայրում, անկախ նրանից անձը փաստացի զբաղեցրել է հատկացված տարածքը, թե ոչ,
- անձը ապահովվել է կացարանով՝ օտարերկրյա պետությունների կամ միջազգային/հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում,
- անձը սեփականության իրավունքով ձեռք է բերել բնակարան,
- անձն այլևս ապաստան հայցողի կարգավիճակ չունի:

Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են որոշակի ժամկետներ: Տվյալ անձն ու իր ընտանիքի անդամները կարող են բնակվել կացարանում մինչև ապաստանի դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կայացվի: Եթե դիմումը մերժվել է, և անձն այն բողոքարկել է, ապա նա իրավունք ունի շարունակելու իր բնակությունը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ մինչև դատական ատյանների կողմից ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվի:

Եթե դիմումը մերժվել է, և անձը չի բողոքարկում մերժման որոշումը, ապա իրավունք ունի շարունակելու բնակվել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում մինչև 30 օր ժամկետով: Նշված ժամկետը լրանալուց հետո անձը պետք է ազատի սենյակը:

Եթե նրա դիմումը բավարարվել է, և նա ճանաչվել է փախստական՝ ստանալով ապաստան, ապա ՄՔԾ-ի որոշումը ստանալուց հետո պետք է ազատի տրամադրված սենյակը: Դրանից հետո կարող է դիմել ՀՀ ԱՍՀՆ՝ հանրակացարանային սենյակ ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն որոշմամբ իրականացվում է ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց բնակարաններ վարձակալելու համար փոխհատուցման տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Ծրագրի շրջանակում փոխհատուցումը տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց՝ ժամանակավոր կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով՝ 6 ամիս ժամկետով: Նշված ժամկետով աջակցության տրամադրման նպատակն է հնարավորություն տալ ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց 6 ամսվա ընթացքում սովորելու լեզուն, լուծելու իրենց զբաղվածության հարցերը՝ այդ ժամկետը լրանալուց հետո կացարանի խնդիրն ինքնուրույն լուծելու նպատակով:

Փոխհատուցման տրամադրման շահառուների ընտրության հայտանիշներն են.

1. Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված լինելը.
2. ընտանիքի անդամներից առնվազն մեկի ինքնասպասարկման ունակություն ունենալը.
3. սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունենալը և վերջին տասը տարում ՀՀ-ում բնակելի տարածություն օտարած չլինելը.
4. ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված լինելը և անապահովության 0-ից բարձր միավոր ունենալը.
5. ստանալու պահին կացարանով ապահովման որևէ պետական ծրագրում, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կացարանով ապահովման որևէ ծրագրում ընդգրկված չլինելը:

Փոխհատուցում ստանալու համար Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձը, իսկ ընտանիքի առկայության դեպքում՝ ընտանիքի չափահաս անդամներից մեկը ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ է ներկայացնում դիմում՝ կից ներկայացնելով նաև ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերը: ՄՍԾ-ն դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված լինելու փաստը պարզելու նպատակով: ՄՔԾ-ն հարցմանը պատասխանում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում: ՄՍԾ-ն դիմումն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում նաև Կադաստրի կոմիտե՝ դիմողի և նրա ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման, ինչպես նաև վերջին տասը տարում ՀՀ-ում բնակելի տարածության օտարման մասին տվյալներ ստանալու նպատակով: Կադաստրի կոմիտեն հարցումն ստանալուց հետո պատասխանում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերից, մասնավորապես որևէ աշխարհագրական տարածքում կամ որևէ ընդհանուր բնութագիր ունեցող չնույնականացված անշարժ գույքի միավորների վերաբերյալ ամփոփ, վերլուծական կամ այլ բնույթի տեղեկությունների տրամադրմանը, և հայցվող տեղեկատվությունը նախապատրաստելու համար գրանցող մարմինը պետք է կատարի անշարժ գույքի միավորների նույնականացման և տեղեկությունների որոնման կամ տարբեր նյութական կրիչների վրա գտնվող տեղեկությունների համադրման աշխատանքներ և նման տեղեկատվությունը դիմողին տրամադրի 25 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին դիմումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացվում է դիմողը՝ նշելով հետաձգման պատճառները, տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Միաժամանակ ՄՍԾ-ն հարցում է ուղարկում Հայաստանում տվյալ ոլորտում գործունեություն ծավալող միջազգային և հասարակական կազմակերպություններին՝ իրենց կողմից վարվող ծրագրերի շրջանակում դիմողին բնակարան վարձակալելու նպատակով փոխհատուցման տրամադրման կամ այլ կացարանով ապահովման փաստը պարզելու նպատակով: Նշված կազմակերպությունները հարցումն ստանալուց հետո պատասխանում են 7 աշխատանքային օրվա ընթացքում: 2024 թվականին փախստականի կարգավիճակ ունեցող անձանց ուղղված ծրագրեր են իրականացրել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը (նշված կազմակերպություններն իրականացրել են՝ բնակարանի վարձի մասնակի փոխհատուցման, բազմանպատակ դրամական աջակցության տրամադրման, հայերենի ուսուցման դասընթացների կազմակերպման, հոգեբանի և իրավաբանի ծառայությունների տրամադրման, դեղորայքային աջակցության, թարգմանչական ծառայությունների տրամադրման, մասնագիտական ուսուցման և այլ ծրագրեր), «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպությունը (նշված կազմակերպություններն իրականացրել են՝ նյութական, բնակարանային խնդիրների լուծման և բժշկական աջակցության, փոքր բիզնեսի դրամաշնորհի, դասընթացների, իրավական, սոցիալական, հոգեբանական խորհրդատվության, մասնագիտական վերապատրաստումների, առողջապահական խնդիրների լուծման, առաջին անհրաժեշտության գույքի տրամադրման և այլ ծրագրեր):

ՄՍԾ-ն դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու հաջորդ օրը պարզում է դիմողի՝ ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում հաշվառված լինելու և անապահովության 0-ից բարձր միավոր ունենալու փաստը: Եթե դիմողն առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված կամ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հատուկ կարիք ունեցող անձ է, ծառայությունը նույն ժամկետում պարզում է նաև դիմումատուի՝ հատուկ հաստատությունում տեղավորված լինելու փաստը:

Դիմումը ենթակա չէ բավարարման, եթե՝

- դիմողը հրաժարվել է տեղավորվել սոցիալական տներում.
- դիմողը որպես առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված կամ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նախատեսված հատուկ կարիք ունեցող՝ իրավասու մարմինների կողմից տեղավորվել է այնպիսի հաստատությունում, որտեղ ապահովվում են նրա կենսաապահովման հիմնական կարիքները.
- դիմելու պահին դիմողը Հայաստանում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից բնակարան վարձակալելու նպատակով փոխհատուցում է ստացել կամ տեղավորվել է կացարանում.
- դիմողը տեղավորվել է սոցիալական տներում.
- դիմողի տվյալները չեն բավարարում ծրագրի համար սահմանված շահառուների ընտրության հայտանիշներին.
- դիմողն արդեն մեկ անգամ օգտվել է սույն ծրագրից.
- դիմողի ինքնասպասարկման ունակության հետ կապված խնդիրներ ունենալու վերաբերյալ առկա են ապաստանի ընթացակարգի ժամանակահատվածում հոգեբանի/հոգեբույժի կողմից տրված եզրակացություն կամ դիմողի՝ ինքնասպասարկման ունակություն չունենալը հաստատող փաստաթղթեր:

Դիմումն ընդունելիս՝ ՄՍԾ աշխատակիցը դիմողին բանավոր ծանոթացնում է փոխհատուցման ընթացակարգին՝ միաժամանակ նրան տրամադրելով գրավոր տեղեկատվություն, որում համառոտ ներկայացված են ծրագրին մասնակցելու պայմանները և փոխհատուցումը դադարեցնելու հիմքերը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր դիմողի համար ծառայությունում բացվում է անձնական գործ:

Փոխհատուցում ստանալու վերաբերյալ դիմումը և դրան կցված փաստաթղթերը, Կադաստրի կոմիտեից, միջազգային և հասարակական կազմակերպություններից հարցումների պատասխանները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՄՍԾ պետին: ՄՍԾ պետը 2 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում՝ դիմողին փոխհատուցում տրամադրելու կամ փոխհատուցման տրամադրումը մերժելու մասին: Փոխհատուցում տրամադրելու կամ փոխհատուցման տրամադրումը մերժելու մասին որոշման մասին ծառայությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին՝ մերժման դեպքում նշելով մերժելու պատճառը և որոշումը բողոքարկելու կարգը:

Յուրաքանչյուր դիմումատուին տրամադրվող փոխհատուցման չափը կազմում է ամսական 60,000 ՀՀ դրամ: Փոխհատուցումը տրամադրվում է ընտանիքին՝ անկախ ընտանիքի անդամների թվից: Փոխհատուցումը տրամադրվում է բանկային փոխանցումով՝ դիմողի կողմից ներկայացված հաշվեհամարին: Փոխհատուցումը չի կարող տրամադրվել դիմողի ներկայացուցչին՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով խնամակալության ներքո գտնվող անձի խնամակալին: Փոխհատուցումը տրամադրվում է 6 ամիս ժամկետով՝ փոխհատուցումը տրամադրելու մասին ՄՍԾ որոշման ընդունմանը հաջորդող օրվանից սկսած:

Փոխհատուցման տրամադրումը դադարեցվում է եթե՝

- դադարեցվել է դիմողի փախստականի կարգավիճակը՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախատեսված հիմքերով.
- դիմողը օգտագործել է փոխհատուցումը ոչ նպատակային.
- դիմողը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից.
- դիմողն ընդգրկվել է կացարանով ապահովման որևէ պետական կամ միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրում.
- դիմողի կողմից սեփականության իրավունքով ձեռք է բերվել բնակելի տարածություն:

Փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին ՄՍԾ-Ն 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին:

Փոխհատուցման ստանալու մասին դիմումները, ըստ դրանք ներկայացնելու ժամկետների, ՄՍԾ-ի կողմից գրանցվում են փոխհատուցում ստանալու համար դիմողների գրանցամատյանում: Գրանցամատյանում նշվում են դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, սեռը, քաղաքացիությունը, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած լինելը հավաստող փաստաթղթի համարը, փոխհատուցման ստացման դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետությունում փաստացի բնակության վայրը, հեռախոսահամարը, փոխհատուցման տրամադրման մասին որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: Յուրաքանչյուր տարվա վերջում գրանցամատյանը կարվում է, կնքվում ՄՍԾ-ի աշխատակազմի կլոր կնիքով և պահվում ՄՍԾ-ում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում: Դիմողը փոխհատուցման տրամադրման մասին որոշումը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ՄՍԾ-ին տրամադրում է բնակարանի վարձակալության վերաբերյալ պայմանագրի պատճենը (առկայության դեպքում), կամ հայտնում է վարձակալած բնակարանի հասցեն և բնակարանի սեփականատիրոջ կոնտակտային տվյալները: Վարձակալած բնակարանի փոփոխության դեպքում դիմողը պարտավոր է նույն տեղեկությունները 7 աշխատանքային օրվա ընթացքում հայտնել ՄՍԾ-ին: Նշված տեղեկատվության հետ միասին դիմողը ՄՍԾ-ին է ներկայացնում իր բանկային հաշվեհամարի վավերապայմանները, որին կատարվելու են փոխանցումները:

Փոխհատուցման նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով՝ ՄՍԾ աշխատակիցների կողմից իրականացվում է մշտադիտարկում՝ առնվազն ամիսը մեկ անգամ վարձակալած բնակարաններ այցելությունների, հեռախոսազանգերի և պետական այլ մարմինների տեղեկատվական շտեմարաններից տեղեկատվություն ստանալու ճանապարհով: Բացի այդ, փոխհատուցման հերթական փոխանցումից առաջ 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմողը պարտավոր է ներկայանալ ՄՍԾ, ինչն անհրաժեշտ է դիմողի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստի հաստատման համար: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գրավոր արձանագրությունը կցվում է դիմողի գործին: 3 օրվա ընթացքում ՄՍԾ չներկայանալու դեպքում ՄՍԾ-ի կողմից ընդունվում է կասեցման որոշում և փոխհատուցումը չի փոխանցվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դիմողը ներկայացնում է սահմանված ժամկետում իր չներկայանալը հիմնավորող հարգելի պատճառներ:

Դիմողի կողմից փոխհատուցման նպատակային չօգտագործումը բացահայտելու դեպքում՝ ՄՍԾ-ի պետի կողմից 2 աշխատանքային օրվա ընթացքում ընդունվում է որոշում՝ փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին:

Փոխհատուցման տրամադրման մասին որոշումը դիմողին հանձնելիս՝ ՄՍԾ-ն միաժամանակ նրան տեղեկացնում է փոխհատուցումը նպատակային չօգտագործելու հետևանքների՝ օրենքով սահմանված փոխհատուցման տրամադրումը դադարեցնելու մասին:

Հայաստանում երեխա է համարվում 18 տարին չլրացած անձը: Իսկ եթե նրան Հայաստանում չի ուղեկցում ընտանիքի որևէ չափահաս անդամ, ապա նա համարվում է՝ առանց ուղեկցողի երեխա: 18 տարին չլրացած անձը, եթե նրան Հայաստանում ուղեկցում է չափահաս անձ, սակայն առանձին է ծնողներից, համարվում է ընտանիքից անջատված երեխա: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի պարագայում՝ ՄՔԾ-ի կողմից ժամանակավորապես դադարեցվում է ապաստանի հայցի քննարկումը, մինչև տվյալ անձի համար նշանակվի ներկայացուցիչ:

Ներկայացուցիչը նշանակվում է ՄՔԾ-ի կողմից՝ համապատասխան գիտելիքներ ու փորձ ունեցող թեկնածուների շարքից: Եթե երեխայի համար նշանակվել է խնամակալ/ հոգաբարձու, ապա ներկայացուցիչ է համարվում հենց նա: Իսկ եթե երեխան տեղավորվել է սոցիալական պաշտպանության հաստատությունում, ապա երեխայի ներկայացուցիչ է նշանակվում հաստատության աշխատակիցը: Նշանակված ներկայացուցիչը ներկայացնում է երեխայի շահերն ապաստանի հայցի քննարկման ամբողջ ընթացքում:

ՄՔԾ-ի հարցազրույցը ևս անց է կացվում ներկայացուցչի մասնակցությամբ: Հարցազրույց անց է կացվում այդ նշանակումից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում: Այն վարում է ՄՔԾ-ի հատուկ կարիքներ ունեցող անձանց հետ աշխատելու փորձառություն ունեցող աշխատակիցը: Երեխայի ցանկության դեպքում ՄՔԾ-ն միջոցներ է ձեռնարկում նրա ծնողներին որոնելու ուղղությամբ՝ ընտանիքի միավորման նպատակով: Առաջնահերթության կարգով հատկացվում է սենյակ ՄՔԾ-ի ենթակայությամբ գործող ապաստան հայցողների համար նախատեսված բնակելի տարածքում՝ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ հաշվի առնելով նրանց լավագույն շահերը և խորհրդակցելով նրանց ներկայացուցչի հետ: Եթե երեխայի ներկայացուցչի հետ խորհրդակցելու արդյունքում համարվի, որ երեխայի բնակությունը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղին չէ, ապա նա կտեղափոխվի կեցություն և խնամք ապահովող մեկ այլ հաստատություն:

Ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվում է նաև անվճար իրավաբանական օգնություն՝ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի: Իրավաբանական խորհրդատվության համար նրանք կարող են դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և ՀՀ փաստաբանների պալատ:

Սոցիալական և հոգեբանական աջակցություն վերջիններիս ցուցաբերում են հիմնականում ՀԿ-ները:

Ինչ վերաբերում է առողջապահական ծառայություններին, ապա առողջական խնդիրներ ունենալու դեպքում՝ անձը կարող է դիմել իր բնակության վայրի պոլիկլինիկա, որտեղ վերջինիս կցուցաբերվի անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական աջակցություն: Առողջապահության մարմինների կողմից կցուցաբերվի անվճար շտապ բուժօգնություն:

Հարցեր քննարկման համար

1. *Ինչ գործոններով է պայմանավորված միգրանտների խոցելիությունը բնակարանային ապահովության տեսանկյունից:*
2. *Ինչպիսի՞ քաղաքականություն է վարվում, և ինչ ծրագրեր են գործում ՀՀ-ում միգրանտների բնակարանային խնդիրների հետ կապված:*

Թեմա 7

Միգրանտների անվտանգ կացություն՝ ատելության, խտրականության կանխարգելմամբ

Միգրանտները կարող են ենթարկվել խտրականության տարբեր ձևերի, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական և գենդերային հիմքով խտրականության: Խտրականությունն արտահայտվում է տարբեր ձևերով և կարող է լինել բացահայտ և հեշտությամբ ճանաչելի, ինչպես նաև ճիշտ հակառակը՝ թաքնված և բարդ:

Ձևերը սովորաբար դասակարգվում են հետևյալ կերպ.

ուղիղ խտրականություն.

երբ դրսևորվում է ոչ բարյացակամ վերաբերմունք, որը չի դրսևորվում ընդունող երկրի քաղաքացիների նկատմամբ,

անուղղակի խտրականություն.

երբ բնակության վայրը, պայմանները դառնում են բացասական վերաբերմունքի հիմք,

կառուցվածքային խտրականություն.

վերաբերում է հաստատություններում և այլ կառույցներում այն կանոններին, նորմերին, մոտեցումներին և վարքագծին, որոնք իրենցից ներկայացնում են խոչընդոտներ այն անձանց հանդեպ, որոնք ձեռք են բերում նույն իրավունքներն ու հնարավորությունները, որոնք հասանելի են բնակչության մեծամասնությանը: Ինչ վերաբերում է բնակարանային պայմաններին, խտրական դրսևորումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ նյութական պայմանները բավարար չեն, կամ քաղաքականությունը չի տալիս լիարժեք կարգավորում, որն էլ բացասական ազդեցություն է թողնում միգրանտների բնակարանային ընտրության վրա: Պետք է նշել, որ կանայք հատկապես խոցելի են խտրականության տեսանկյունից՝ հաշվի առնելով որոշ օրենսդրական կարգավորումների խտրական բնույթը և կանանց խոցելիությունը բռնության և սեռական ոտնձգության տեսանկյունից: Նման խոցելիությունը մեծանում է, երբ միգրանտ կանայք դառնում են անօթևան:

Շատ միգրանտներ դիմակայում են միգրացիայի գործընթացի հետ կապված տարբեր խնդիրներին ու սթրեսներին, և սոցիալական աշխատողները կարող են օգնել միգրանտներին՝ գործարկելու տարբեր տեսակի ռազմավարություններ ու ընդլայնելու ռեսուրսների հասանելիության ծավալը, որոնք կօգնեն նրանց հաղթահարել դժվարությունները: Դիմակայունությունը ներառում է հաղթահարման անհատական և միջանձնային հմտություններ, որոնք օգնում են մարդուն կամ նրանց համայնքին դիմակայել դժվարին իրավիճակներում:

Անհատ միգրանտները, միգրանտների ընտանիքներն ու համայնքները կարող են դիմակայել դժվարություններին: Հաջողության գործոնները, որոնք նպաստում են միգրացիոն գործընթացում հանդիպող դժվարությունների հաղթահարման ունակության և դիմադրողականության բարձրացմանը, հետևյալներն են՝

- սթրեսի դեմ պայքարի առողջ միջոցներ (ֆիզիկական և հուզական արձագանք սպառնացող խթաններին), որոնք առաջանում են միգրացիոն սթրեսի գործոնների պատճառով և որոնք կարող են դարձնել միգրացիան սպառնալիք կամ մարտահրավեր անհատների և համայնքների համար, օրինակ՝ այնպիսիք, ինչպիսիք են սպասողական իրավիճակի երկար ժամկետները, բարդ միգրացիոն քաղաքականությունները, անբավարար թարգմանչական ծառայությունները և այլն,
- համայնքների կողմից սոցիալական աջակցություններ, որոնք տրամադրվում են շարունակական, կառուցվածքային կերպով,
- քննադատական մտածողության հմտություններ կամ խնդրի լուծման ունակություն կամ գործողությունների տարբեր տարբերակներից մեկի ընտրություն կատարելու կարողություն,
- իմաստի կամ նպատակի ներքին զգացողություն, որը կարող է դառնալ ուժի և դժվարին իրավիճակում նոր ուղղության աղբյուր:

Սոցիալական աշխատողներն օգնում են միգրանտներին հաղթահարել բազմաթիվ խոչընդոտները, որոնց նրանք բախվում են: Միգրանտը կարող է ունենալ տրավմատիկ փորձ, որը ազդում է վերջինիս հուզական դաշտի վրա, հատկապես, երբ նա սկսում է նոր կյանք:

Հաճախ անտեսվում են միգրանտների անձնական և համայնքային մարտահրավերները, որոնց բախվում են, այդ թվում՝

- սթրեսի գործոնները, որոնք կապված են ընտանիքի բաժանման, սոցիալական մեկուսացման, աշխատանքային զբաղվածության սահմանափակ հնարավորությունների, քաղաքացիական պատերազմի կամ աղքատության հետ,
- կորստի, տխրության, վշտի և միայնության զգացողությունները, որոնք ընտանիքից բաժանման, լեզվական և այլ խնդիրների հետևանք են,
- մշակութային ցնցումը և սթրեսը, որոնք ծնվում են վարքային և հոգեբանական կարգավորման միջոցով՝ նոր մշակույթին հարմարվելու գործընթացին զուգահեռ:

Սակայն միգրանտների մարտահրավերներն այսքանով չեն ավարտվում: Նրանց խնդիրների շարքում են նաև՝

- սահմանափակ նյութական ռեսուրսները և ունեցվածքը,
- իրավական խնդիրների շրջանակը,
- առողջապահական ոլորտի խնդիրները,
- կրթական բնույթի խնդիրները,
- երկարաժամկետ կացարանի խնդիրը,
- սոցիալական աջակցության սահմանափակ համակարգը,
- սոցիալական ծառայությունների խոչընդոտները՝ պայմանավորված թարգմանիչների բացակայության կամ մասնագետների անբավարար քանակի և մի շարք այլ խնդիրների հետ,
- խտրականությունը և մարգինալացումը՝ և այլն:

Հարցեր քննարկման համար

1. *Խտրականության ինչ ձևերի կարող են հանդիպել միգրանտները:*
2. *Սոցիալական աշխատողներն ունեն ազդեցություն կամ դերակատարում միգրանտների խնդիրների հաղթահարման և դիմակայունության զարգացման տեսանկյունից:*

Թեմա 8

Միգրացիայի տեսանկյունից խոցելիության առանձնահատկությունները, ռիսկի գործոնները և հետևանքները

Հիմնական խնդիրները, որոնց բախվում են միգրանտները, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ **արտաքին** և **ներքին** խնդիրներ:

Արտաքին խնդիրները կապված են ծառայությունների հասանելիության խոչընդոտների հետ կամ ընդունող հասարակության կողմից բացառման դրսևորումների հետ, որոնց հիմքում անձի խոցելիությունն է: Անձը խոցելի է, երբ իրեն ուղղված սպառնալիքներին, արտաքին վտանգներին հակազդելու, դիմակայելու կարողությունը թույլ է զարգացած: Միգրանտը կարող է խոցելի լինել տարբեր հանգամանքներից ելնելով և կարող է ունենալ միաժամանակ մի քանի խոցելիություն: Սոցիալական խոցելիությունը ենթադրում է հասարակության կողմից դրսևորվող սպառնալիքների վտանգ, որոնք կարող են արտահայտվել միգրանտների նկատմամբ դաժան վերաբերմունքով: Ֆիզիկական խոցելիությունը պայմանավորված է առողջական խնդրով, անձի ֆունկցիոնալ կարողությունների սահմանափակմամբ, հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու հանգամանքով: Իսկ հոգեբանական խոցելիության պարագայում անձի մոտ առկա են հոգեբանական կամ հոգեկան առողջության խնդիրներ:

Ներքին խնդիրները հուզական արձագանքներն են, որոնք հաճախ կոչում են «մշակութային շոկ»: Մշակութային շոկը հանկարծակի կամ անսպասելի դրսևորվող փոփոխություններին հուզական արձագանքման դրսևորումների հավաքածու է: Մշակութային շոկը տեղի է ունենում, երբ մարդն այլևս չի վայելում իր սեփական մշակույթի նշանակալի անդամների աջակցությունը և ենթարկվում է նոր մշակութային ազդեցությունների, որոնք միգրանտի համար ունեն քիչ կամ աննշան նշանակություն: Այս իրավիճակը կարող է հանգեցնել չհասկացվածության և սթրեսի ավելացման:

Մշակութային շոկը հուզական հավասարակշռության կորուստն է, որով անձը տառապում է ծանոթ միջավայրից, որտեղ ամեն ինչ և մարդկանց վարքագիծը հստակ է, մեկ այլ միջավայր տեղափոխվելիս, որտեղ վերջինիս համար առկա է անորոշության բարձր մակարդակ:

Միգրանտները տարբեր կերպ են արձագանքում իրավիճակին: Մի խումբն իր ուշադրությունը սևեռում է հարազատ մշակութային միջավայրի և նոր մշակութային համատեքստի ընդհանրությունների վրա և ընդունող հասարակության դրական կողմերի բացահայտման վրա, ինչն օգնում է հարմարվել նոր մշակութային միջավայրին: Մերժողական տրամադրվածությամբ միգրանտներն ի սկզբանե կենտրոնանում են միայն տարբերությունների վրա և շեշտադրությունը սևեռում ընդունող հասարակության բացասական կողմերի վրա: Որոշ միգրանտներ էլ, հարազատ երկրի/համայնքի փառաբանմանը զուգահեռ, քննադատաբար են մոտենում ընդունող հասարակությունում առկա երևույթներին: Վերջին խումբ միգրանտներն առավել բաց են նոր հասարակությունում ինտեգրվելու հարցում, ինչն էլ փորձում են իրականացնել իրենց առօրյան պլանավորելու, հումորի զգացումը հետ վերադարձնելու, ընդունող հասարակությունում կիրառվող վարքագծի նորմերը ընդունելու և ընդունող հասարակության հետ հուզական դրական կապը զարգացնելու միջոցով:

Մշակութային շոկի խնդրահարույց փուլերի ախտանիշներն են.

- հեռանկարի կորուստ,
- հիասթափություն, դյուրագրգիռություն, գերզգայունություն,
- ֆիզիկական անհարմարավետություն,
- մտավոր հոգնածություն, ճանձրույթ,
- մոտիվացիայի բացակայություն,
- ապակողմնորոշում, թե ինչպես աշխատել / շփվել այլ մարդկանց հետ,
- կասկածամտություն (զգացողություն, թե բոլորը ցանկանում են իրենցից օգուտ ստանալ):

Միգրանտները պետք է հաղթահարեն՝

- ընդունող երկրում հարմարման՝ մշակութային և կազմակերպական տարբերություններից բխող հոգեբանական, ճանաչողական և վարքագծային խնդիրները,
- նշանակալի անձանց բացակայությունը
- կարգավիճակի, մասնագիտական ինքնության և ունեցվածքի կորուստը,
- իրենց ինքնության և դերի շփոթությունը,
- վերահսկողության զգացողության, իրավիճակը հաղթահարելու ունակության փոփոխությունները:

Միգրանտները նաև ունեն ռիսկ՝ ընդունող երկրի կողմից մերժվելու, ինչպես նաև խտրականության կամ միգրանտի նկատմամբ ատելության ենթարկվելու, որոնք կարող են հանգեցնել՝

- ոչ լիարժեք աշխատանքային զբաղվածության,
- ոչ բավարար կրթության,
- նյութական զրկանքների, աղքատության և սոցիալական մեկուսացման,
- կացարանային խնդիրների,
- վնասակար նյութերի չարաշահման, խոսքի ատելության, ֆիզիկական բռնության և ատելության հիմքով հանցագործությունների:

Կարևոր է նշել, որ մեծ ծավալի արտաքին տեղաշարժը /հատկապես երկրից հեռացումը/ մի շարք բացասական հետևանքներ է թողնում հասարակական կյանքի և հասարակության զարգացման ընթացքի վրա: Դրանցից առավել կարևորներն են՝

- Սոցիալ-ժողովրդագրական բնույթի հետևանքները - էմիգրացիոն հոսքերում աշխատանքային և վերարտադրողական տարիքի տղամարդկանց թվի ակնհայտ գերակշռությունը հանգեցնում է մասնավորապես ծնելիության ցուցանիշի կտրուկ նվազմանը: Նվազում է նաև ամուսնությունների թիվը, և դրան հակառակ՝ մեծանում է ամուսնալուծությունների թիվը:

- Սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքները - Երկրում լայն տարածում է ստանում աղքատությունը: Բնակչության առավել ակտիվ և բարձր որակավարում ունեցող զանգվածի հեռացումը դանդաղեցնում է հասարակության զարգացման ընթացքը: Բնակչության դանդաղ վերարտադրությունը չի ապահովում երկրի բանակի համալրման համար անհրաժեշտ մարդկանց թվաքանակը: Չի ապահովվում կրթական համակարգի համար անհրաժեշտ երեխաների թիվը: Չի ապահովվում նաև ապրանքների և ծառայությունների սպառողների որոշակի զանգված:
- Բարոյահոգեբանական բնույթի հետևանքները - Բնակչության շրջանում խորանում է երկիրը լքելու, երկրի ապագայի նկատմամբ անտարբերության, երկրի զարգացման համար, անարդարությունների ու օրինախախտումների դեմ չպայքարելու, բացասական երևույթներին հարմարվելու մտածելակերպը՝ նպաստելով մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումների ավելացմանը:

Հարցեր քննարկման համար

1 *Որո՞նք են հիմնական խնդիրները, որոնց բախվում են միգրանտները:*

2 *Ի՞նչ է մշակութային շոկը:*

Թեմա 9

Միգրանտների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները

Սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիան (NASW) խրախուսում է սոցիալական աշխատողներին՝ շարունակել կրթությունը միգրացիոն քաղաքականության ոլորտում և նպաստել փոփոխությունների կայացմանը:

Սոցիալական աշխատողները, ինչպես նաև սոցիալական քաղաքականություն մշակողները կարող են դրական ազդեցություն ունենալ միգրացիոն քաղաքականության վրա՝ հանդես գալով ի օգուտ հետևյալ փոփոխությունների՝

- կալանքի մարդասիրական մեթոդների հաստատում,
- փաստաթուղթ չունեցող անձանց համար պաշտպանական մեխանիզմների լավարկում,
- միգրանտների առողջության պահպանմանն ուղղված ծառայություններ, այդ թվում հոգեկան առողջության ծառայությունների ընդլայնում,
- միգրացիոն ծառայություններ մատուցողներին ուղղված աջակցության մեծացում,
- կալանավորման և արտաքսման հետևանքով բաժանված միգրանտների ընտանիքների պահպանմանն ու վերամիավորմանն ուղղված միգրացիոն քաղաքականությունների մշակում:

Միգրացիոն քաղաքականության նման փոփոխությունները կարող են մեղմացնել և լուծել միգրանտների առջև ծառացած որոշ մարտահրավերները: Սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիան ներկայացնում է, որ սոցիալական աշխատողները կարող են լրացուցիչ աջակցել միգրանտներին, օգնելով նրանց ստանալ հասանելիություն միգրացիոն օգնությանը և ծառայություններին՝ ապահովելու համար միգրանտների անվտանգությունը, մշտական կացության ապահովումը և բարեկեցությունը:

Անվտանգություն նշանակում է բնակարանային բավարար պայմաններ, մաքուր ջուր և սննդարար սնունդ, առողջապահական ծառայությունների հասանելիություն և մաքուր միջավայր, որտեղ բացակայում են առողջության համար վտանգավոր գործոնները: Մշտական կացության ապահովում ասվածը ենթադրում է վերը թվարկված հիմնական ռեսուրսների՝ ջրի, բնակարանի, սննդի, առողջապահական ծառայությունների կայուն ապահովում: Հիմնական ռեսուրսներից բացի կարևորվում են նաև կրթական ծառայությունների կայուն ապահովումը, բանկային համակարգին կայուն հասանելիությունը, իրավաբանական աջակցության և սոցիալական ծառայությունների կայուն ապահովումը: Բարեկեցությունն էլ ենթադրում է արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ պայմանների բավարարում: Միգրանտները հաճախ կարիք ունեն աջակցության՝ առողջապահական ծառայություններից մինչև բնակարանային պայմանների ապահովում, և սոցիալական աշխատողների դերը այս գործում մեծ է:

Սոցիալական աշխատողների կարևոր առաքելությունն է նաև իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնք ապահովում են ընտանիքների միասին լինելը և վերամիավորում են ընտանիքներին, որոնք բաժանվել են կալանավորման և արտաքսման պատճառով: Իսկ այս ամենի արդյունքում կայացած միգրացիոն քաղաքականության փոփոխությունները կարող են մեղմացնել և լուծել միգրանտների առջև ծառացած որոշ մարտահրավերները:

Սոցիալական աշխատողները, որոնք աշխատում են միգրանտ խմբերի հետ, պետք է մտածեն՝ այդ թիրախային խմբին լավագույնս աջակցելու համար անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները զարգացնելու մասին: Սոցիալական աշխատողները կարող են իրականացնել հետևյալ քայլերը՝

1. սովորել երկրորդ կամ երրորդ լեզու,
2. համագործակցել պետական և ոչ պետական կառույցների հետ, որոնք ծառայություններ են մատուցում միգրանտ խմբերին, օրինակ՝ համայնքային առողջության կենտրոններ, հիվանդանոցներ, իրավապաշտպան կազմակերպություններ և այլն,
2. բարելավել մշակութային գիտելիքների իմացությունը՝ ուսումնասիրելով տարբեր միգրանտների համայնքների արժեքներն ու առաջնահերթությունները:

Սոցիալական աշխատողները, որոնք ցանկանում են մասնակցել միգրանտների իրավունքների պաշտպանության գործին, կարող են աշխատել և համագործակցել կազմակերպությունների հետ, որոնք ունեն միգրանտների աջակցության գործում հաջողված փորձառություն: Այդ կազմակերպություններում աշխատելը կամ կամավորությունը կարող է նաև ստեղծել հնարավորություններ՝ կապեր հաստատելու այլ սոցիալական աշխատողների և աջակիցների հետ, որոնք արդեն փորձ ունեն միգրանտների աջակցման գործում: Կարևոր է ինքնակրթվելը, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելը, որոնք վերաբերում են միգրանտների կարգավիճակին, քաղաքացիությանն ու իրավական հարցերին:

Սոցիալական աշխատողները պետք է ծանոթ լինեն նաև բոլոր այն մարտահրավերներին, որոնց բախվում են միգրանտները մշակութային հարմարման փուլում և աջակցեն հաղթահարել դրանք: Միգրանտների լեզվով խոսող սոցիալական աշխատողները կարող են հատկապես օգտակար լինել այն միգրանտների համար, որոնք կալանավորված կամ դատապարտված են: Սոցիալական աշխատողները կարող են նաև աջակցել միգրանտներին՝ տրամադրելով տեղեկատվություն նրանց իրավունքների վերաբերյալ՝ տալով տեղեկատվություն ընդունող երկրի միգրացիոն քաղաքականության մասին, իրենց հասանելիք ռեսուրսներին հասանելիության և ընթացակարգերի մասին, ինչպես նաև ներկայացնելով կալանավորման և արտաքսման հնարավոր ռիսկերը: Եվ կարևոր է փոխանցել տվյալներ միգրացիոն քաղաքականություն իրականացնողների վերաբերյալ և թե ինչպես կարող են կապ հաստատել հաստատությունների հետ: Սոցիալական աշխատողները պետք է աջակցեն՝ պաշտպանելով ներգաղթյալ ուսանողներին, նպաստելով աշխատանքի և կարիերայի զարգացմանը, տեղեկացնելով նրանց օրինական իրավունքների մասին և ուղղորդելով ներգաղթյալ ընտանիքներին իրացնելու սննդի, առողջության պահպանման և բնակարանի իրավունքները՝ առկա ռեսուրսների հիման վրա:

Կարևոր է ընդգծել, որ միգրանտների և ընդունող հասարակությունների միջև միջմշակութային կապերի հաստատմանը և փոխհասկացվածությանը կարող են նպաստել որոշ քայլեր, մասնավորապես.

1. նպատակային նախաձեռնությունների իրականացում, որն ուղղված է միգրանտների և ընդունող հասարակության ներկայացուցիչների համախմբմանը,

2. հանրային հաստատություններին, ներառյալ գրադարաններին, սոցիալական և մշակութային կենտրոններին, սպորտային և երիտասարդական ակումբներին, կամավորական միություններին և արհեստակցական միություններին անդամակցելը, որն ընդառաջ քայլ է միգրանտների կողմից և խթանում է նրանց մասնակցայնության բարձրացմանը,

3. միջոցառումների, փառատոնների և երեկույթների անցկացում, որոնք համախմբում են ընդունող և միգրանտ բնակչությանը,
4. երիտասարդներին միջմշակութային հմտությունների ուսուցում՝ որպես դպրոցներում քաղաքացիական կրթության մաս և մեծահասակների համար նմանատիպ սեմինարների կազմակերպում,
5. լեզվական սրճարանների ձևաչափով հանդիպումների անցկացում, որոնք միգրանտներին և ընդունող բնակչությանը հնարավորություն են տալիս սովորել միմյանց լեզուն,
6. միևնույն նախասիրությամբ խմբերի կազմակերպում, ինչպիսիք են գրքերի ակումբները կամ խոհարարական խմբերը, որոնք գրավում են տարբեր ծագում ունեցող մարդկանց,
7. միգրանտներից և տեղի բնակիչներից կազմված համայնքային թիմերի ձևավորում՝ համայնքի տարբեր տեղական խնդիրների և մարտահրավերների հասցեագրման և լուծման նպատակով,
8. սպորտային միջոցառումների անցկացում՝ խառը կազմեր ունեցող թիմերով,
9. գործընկերային հարաբերությունների հաստատմամբ նախաձեռնությունների իրականացում, որոնք ենթադրում են միգրանտ աշակերտների մասնակցայնության մեծ հարաբերակցությամբ դպրոցների և այն դպրոցների միջև կապերի հաստատում, որտեղ սովորողների մեծամասնությունը ընդունող հասարակությունից է կամ միգրանտների և ընդունող հասարակության ընտանիքների միջև նմանատիպ հարաբերությունների հաստատում,
10. լրատվամիջոցների աջակցությամբ նախագծերի իրականացում, որտեղ և՛ միգրանտները, և՛ ընդունող հասարակության ներկայացուցիչները խոսում են իրենց սեփական փորձի մասին և քննարկում են կարիքները, հեռանկարները տարբեր հարցերի և ընդհանուր ապագայի տեսլականների շուրջ:

Վերոնշյալ նախաձեռնություններից շատերը, որոնք ուղղված են միգրանտների և ընդունող հասարակության միջև շփումներին և միջմշակութային երկխոսությունը խթանելուն, կարող են կազմակերպվել համայնքային մակարդակում՝ համագործակցելով միգրանտների ասոցիացիաների և հասարակական կազմակերպությունների, հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Այնուամենայնիվ, շատ կարևոր է, որ համայնքները գիտակցեն նախաձեռնությունների կարևորությունը և տրամադրեն ֆինանսական աջակցություն՝ համապատասխան նպատակային ծրագրերի իրականացման համար:

Այսպիսով, փախստականների հետ սոցիալական աշխատանքի նպատակն է աջակցել նրանց հաղթահարել սոցիալական հիմնախնդիրները՝ ստեղծելով անվտանգ միջավայր և կապելով համապատասխան ցանցերի ու ռեսուրսների հետ:

Սոցիալական աշխատողն, օգտագործելով առկա միջոցներն ու հնարավորությունները կամ ստեղծելով նորերը, նպաստում է շահառուի ինքնուրույնության աստիճանի մեծացմանը և իր կյանքն ինքնուրույն կառուցելու, ծագած խնդիրները լուծելու հմտությունների ու ունակությունների զարգացմանը՝ այդպիսով օգնելով լուծել տվյալ անձի սոցիալական հիմնախնդիրները:

Միգրանտների հետ աշխատանքում ևս, սոցիալական աշխատողը կարող է կիրառել **անհատական** սոցիալական աշխատանքի (փուլերն են՝ սկզբնական, աշխատանքային, ավարտական); **ընտանեկան** սոցիալական աշխատանքի (փուլերն են՝ սոցիալական, հիմնախնդրային, միավորող/ինտեգրատիվ, եզրափակիչ); **համայնքային** սոցիալական աշխատանքի (փուլերն են՝ ծանոթացում, գնահատում, կազմակերպում, հիմնախնդրի շուրջ աշխատանք, արդյունքների ամրապնդում, ավարտական) մեթոդները:

Միգրանտների հետ աշխատանքում հատկապես արդյունավետ կարող է լինել խմբային սոցիալական աշխատանքի մեթոդի կիրառումը, որն ունի խմբի ձևավորման, խմբի հետ աշխատանքի, աշխատանքի ավարտի փուլեր: Այս համատեքստում կարող են ձևավորվել **կրթական խմբեր**, որոնք ստեղծվում են նոր կամ լրացուցիչ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև **ինքնօգնության/փոխօգնության** խմբեր, որի անդամներն իրենց փորձն են կիսում մյուսների հետ՝ փորձելով գտնել սեփական խնդիրների պատճառները և հնարավոր լուծումները՝ հիմնվելով մյուսների կենսափորձի վրա:

Սոցիալական աշխատողի դերերն են.

միջնորդ	կապ է ստեղծում շահառուի և ծառայությունների, ռեսուրսների միջև,
շահերի պաշտպան	շահառուներին օգնում է իրացնել իրենց իրավունքները՝ հանդես գալով նրանց անունից և/կամ օգնելով ներկայացնել իրենց իրավունքները,
կրթող/զարգացնող	նպաստում է շահառուի՝ դժվարությունների հաղթահարման իր կարողությունների բացահայտմանն ու օգտագործմանը, առկա սոցիալական հմտությունների կատարելագործմանը և նորերի ձեռքբերմանը,
իրականացնող	իրականացնում է գործառույթներ և քայլեր շահառուի խնդիրները լուծելու նպատակով,

խորհրդատու	շահառուին տրամադրում է սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, ինչպես նաև թերապևտիկ օգնություն՝ սեփական հիմնախնդիրը հասկանալու, վարքը փոփոխելու և հիմնախնդրի լուծման ուղիները դուրս բերելու համար,
համագործակցող	շահառուի խնդիրների լուծման նպատակով ողջ ընթացքում համագործակցում է գործընթացում ընդգրկված մյուս մասնագետների, կառույցների, շահառուի հետ (օր.՝դպրոցի մանկավարժների և ընտանիքի հետ՝ երեխայի կրթության և դաստիարակության հետ կապված խնդիրների լուծման նպատակով),
գործընթացին հետևող	հետևում է մատուցվող ծառայություններին, դրանց համապատասխանությանը շահառուի կարիքներին, աշխատանքի ընթացքին, համակարգում է աշխատանքը,
տեղեկացնող	հավաքագրում է ողջ տեղեկատվությունը, տեղեկացված է տարվող աշխատանքներից և ըստ անհրաժեշտության կարող է մյուս մասնագետներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն,
աջակցող	աջակցում է շահառուին ուղղված ծառայությունների մատուցման գործընթացին՝ նպաստելով գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը,
իրազեկող	իրազեկում է ծառայությունների, ռեսուրսների, իրավունքների և այլնի մասին,
փոփոխություններ կատարող	փորձում է փոխել ձևավորված արժեքները, մտածելակերպը, զարգացնում է սոցիալական պատասխանատվությունը, ինքնորոշման ունակությունը,
փոփոխություններ կատարող	փորձում է փոխել ձևավորված արժեքները, մտածելակերպը, զարգացնում է սոցիալական պատասխանատվությունը, ինքնորոշման ունակությունը,
	և այլն:

Սոցիալական աշխատողը դեպքի վարման շրջանակում իրականացնում է.

- շահառուի և նրա ընտանիքի իրավիճակի խորքային գնահատում,
- միջամտության համալիր պլանի կազմում՝ ներառյալ շահառուի կարիքներին համապատասխան սոցիալական ծառայությունների տեսակների պլանավորում,
- ծառայությունների հետ կապի հաստատում և համակարգում, միջամտության պլանի իրականացում,
- ծառայությունների տրամադրման մոնիթորինգի իրականացում, ըստ անհրաժեշտության՝ դեպքի վարման ընթացքի վերանայում,
- դեպքի վարման ընթացքում շարունակական աջակցության տրամադրում շահառուին՝ ներառյալ խորհրդատվություն, ուղղորդում, սոցիալ-հոգեբանական աջակցություն, տեղեկատվական աջակցություն, կոնֆլիկտների հաղթահարմանն ուղղված աջակցություն, շահերի պաշտպանություն և այլն:

Միգրանտների հետ աշխատանքում պետք է.

- Նպաստել միգրանտի կարողությունների զարգացմանն ու ինքնորոշմանը,
- անձնական հետաքրքրությունից բխող հարցեր չտալ,
- խուսափել բարդ բառերից,
- խոսել դանդաղ և հստակ,
- ուշադրություն դարձնել մարմնի լեզվին,
- չքննադատել,
- հետևել ձայնի տոնին,
- ազնիվ լինել և զուր խոստումներ չտալ,
- նկարներ և նշաններ օգտագործել,
- ակտիվ լսել,
- ապրումակցել,
- զերծ մնալ կարծրատիպերից,
- հարգալից վերաբերվել,
- վստահություն ստեղծել:

Սոցիալական աշխատողն իր ողջ գործունեության ընթացքում իրականացնում է մի շարք դերեր, գործառույթներ և աշխատանքներ առաջնորդվելով մասնագիտական էթիկայի արժեքներով, ինչպես նաև օրենքով սահմանված սկզբունքներով:

Հարցեր քննարկման համար

1 *Ո՞րն է սոցիալական աշխատողի կարևորությունը միգրացիոն քաղաքականության մեջ:*

2 *Որո՞նք են սոցիալական աշխատողի դերերը միգրանտների հետ սոցիալական աշխատանքում:*

Թեմա 10

Միգրանտների ինտեգրման շրջանակը և դերակատարները Չեխիայում, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունների դիտարկում

ԵԱՀԿ մասնակից պետություններն ունեն ինտեգրումը կառավարելու տարբեր ինստիտուցիոնալ շրջանակներ: Երկրների մեծ մասում խթանը գալիս է կառավարության կենտրոնական նախարարություններից կամ համապատասխան նախարարություններին առընթեր մարմիններից: Միգրացիայի մասնագիտացված նախարարության բացակայության դեպքում՝ սովորաբար լիազոր մարմինը լինում է Աշխատանքի և սոցիալական հարցերի կամ Ներքին գործերի նախարարությունը, թեև երբեմն նաև լինում է Մշակույթի կամ Արդարադատության նախարարությունը:

Չեխիայի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության պատասխանատու և լիազոր մարմինը Ներքին գործերի նախարարությունն է: Եվ Ներքին գործերի նախարարության գործունեությամբ են կարգավորվում նաև միգրացիոն հարցերը Կիպրոսի, Հունաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Իտալիայի, Մոլդովայի, Ռումինիայի, Սլովակիայի, Ուկրաինայի, Ավստրիայի Հանրապետություններում:

Հայաստանի Հանրապետությունում վերջին կառուցվածքային փոփոխություններից հետո ևս ՀՀ Ներքին գործերի նախարարության ենթակայության տակ է գործում Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը: Սակայն կարևոր է նշել, որ միգրանտների ինտեգրման հարցերի լուծման շրջանակը վերապահված է ՀՀ ԱՍՀՆ-ին:

ԵԱՀԿ մասնակից պետություններից Չեխայի Հանրապետությունում գործում է մշտական բնակություն հաստատելու արագ կարգավորման մեխանիզմ, որի հիմքը ներդրումներն են: Նման դեպքերում երկարաժամկետ կացություն ստանալու մտադրություն ունեցող միգրանտները պետք է որոշակի գումար ներդնեն բիզնես ոլորտում կամ գույք, կամ պետական պարտատոմսեր ձեռք բերեն:

Միգրանտների ընտանիքների վերամիավորումը կարգավորող մեխանիզմները տարբեր երկրներում տարբեր են: Եվ վերամիավորման իրավունքը սովորաբար վերապահված է «միջուկային ընտանիքի» անդամներին (միգրանտների ամուսիններին և երեխաներին): Այնուամենայնիվ, երկրների ազգային քաղաքականությունները կարող են սահմանել կարգավորող որոշակի պայմաններ՝ միգրանտների ընտանիքների վերամիավորման իրավունքի իրացման տեսանկյունից:

Ազգային օրենսդրությունները տարբերվում են նաև այն առումով, թե արդյոք թույլ են տալիս ընտանիքի վերամիավորումը միայն օրինական ամուսնական հարաբերությունների դեպքում, թե նաև քաղաքացիական ամուսնությունների պարագայում: Տարբերություններ կան նաև երկրների կարգավորումներում՝ առնչվող միասեռ զույգերին: Մի շարք երկրներում, որոնց թվում է նաև Չեխիայի Հանրապետությունը, գործում է միգրանտների ընտանիքների վերամիավորման հավասարության սկզբունք, որը տարածվում է նաև միասեռ ամուսնություններից բաղկացած ընտանիքների վրա, մինչդեռ, Միացյալ Թագավորությունը և Նիդերլանդները վերաբերվում են բոլոր միասեռ զույգերին նույն կերպ, անկախ այն հանգամանքից, արդյոք գտնվում են օրինական ամուսնության մեջ, թե ոչ:

Քաղաքացիության ձեռքբերման համար անհրաժեշտ պարտադիր պահանջ է դառնում պետական լեզվի և/կամ քաղաքացիական գիտելիքների իմացության թեստի հանձնումը: ԵԱՀԿ անդամ պետություններում պահանջվող լեզվի մակարդակը սովորաբար տատանվում է A2-B1 մակարդակներում: Երկրներում մոտեցումները տարբեր են ու մինչ մի քանի երկրներ առաջարկում են ապագա քաղաքացիների համար դասընթացներ՝ նրանց քաղաքացիության քննությանը նախապատրաստելու համար (Պորտուգալիայում և Էստոնիայում), մի շարք պետություններ նրանց առաջարկում են անվճար ռեսուրսներ, որոնք պարունակում են պահանջվող տեղեկատվությունը, ինչպես օրինակ՝ «Բացահայտեք Կանադան» գրքույկը պարունակում է տեղեկատվություն քաղաքացիության իրավունքների, քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների մասին, Կանադայի պատմության, արդարադատության համակարգի, կառավարման կառուցվածքի, ընտրական իրավունքի, տնտեսության և աշխարհագրության մասին: Օրինակ՝ Դանիան տրամադրում է առցանց ռեսուրս, որը կենտրոնացած է երկրի պատմության, կառավարության և ընտրությունների, բարեկեցության համակարգի և արտաքին հարաբերությունների վրա: Չեխիայի Հանրապետությունն իր երկիր մուտք գործող միգրանտներին քաղաքացիություն տրամադրելու համար պահանջ է ներկայացնում հանձնելու պետական լեզվի քննություն, որի անցողիկ շեմը սահմանել է B1 մակարդակի իմացությունը և պարտադիր պայման է նաև քաղաքացիական գիտելիքների իմացության թեստի հանձնումը:

ԵԱՀԿ որոշ անդամ երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիան և Նիդերլանդները, ներդրել են «ինտեգրման պայմանագրեր», որոնք սահմանում են ինտեգրման գործընթացում միգրանտի պարտավորությունները և տրամադրում են ինտեգրմանը նպաստող որոշակի ծառայություններին հասանելիություն: «Պայմանագիր» հասկացությունն ընդգծում է, որ միգրանտները և այլ շահառուները ունեն ոչ միայն իրավունքներ, այլև պարտականություններ: Օրինակ՝ Ֆրանսիայում ինտեգրացիոն պայմանագրերը կենտրոնացված են փախստականների և լրացուցիչ պաշտպանություն ստացող շահառուների վրա: Ինտեգրացիոն պայմանագրերի ստորագրումը միգրանտին պարտավորեցնում է պայմանագրով սահմանված պարտականություններն իրականացնել, ներառյալ մասնակցել քաղաքացիական ուսուցմանը, պետական լեզվի դասընթացին, իսկ փոխարենը ստանալ սոցիալական աջակցություն և նպատակային աջակցություն՝ կապված աշխատանքի և բնակարանի ձեռքբերման հետ:

Չեխիայի Հանրապետությունը որդեգրել է խիստ անհատականացված մոտեցում միգրանտներին, որը ենթադրում է, որ պետությունը լիարժեք տիրապետում է միգրանտների մասին համապարփակ տեղեկատվությանը, դուրս բերված կարիքներին, որոնց էլ հարմարեցնում է ինտեգրացիոն ծառայությունները:

Չեխական պետական մոտեցման հիմքում կարիքահենության հիմքով հարմարեցված միգրացիոն ծառայություններն ու ծրագրերն են, որոնք էականորեն տարբերվում են ստանդարտացված ընդհանրական մոտեցումից: Այս չեխական մոտեցումը, որը հայտնի է «անհատական ինտեգրման պլան» անվամբ, որդեգրել են նաև Ֆինլանդիայի, Իտալիայի, Իսպանիայի և Շվեդիայի Հանրապետությունները:

Չեխիայի Հանրապետությունում ազգային մակարդակում մայրաքաղաք Պրահայում գործում է Միգրանտների պլատֆորմ խորհրդատվական մարմինը, իսկ քաղաքային մակարդակում Մլադա Բոլեսլավ և Պլզեն քաղաքներում գործում են ինտեգրման հանձնաժողովները: Թեև խորհրդատվական մարմինները կարող են ցուցաբերել սահմանափակ և ոչ ուղղակի ազդեցություն քաղաքականության վրա, այդուհանդերձ խորհրդատվական մարմիններն ունեն կարևոր նշանակություն և կարող են լինել ազդեցիկ: Խորհրդատվական մարմինները միգրանտների համայնքներին տալիս են ներկայացուցչական ձայնի և իշխանության մարմինների ու շահագրգիռ կառույցների հետ երկխոսելու հնարավորություն՝ դրանով իսկ օգնելով ձևավորել քաղաքականություն, որն ազդում է միգրանտների կյանքի վրա:

Խորհրդատվական մարմիններում միգրանտների մասնակցության երեք հիմնական ձևեր կարելի է առանձնացնել՝

1. խորհրդատվական մարմիններ, որոնց կազմում ընդգրկված են բացառապես քաղաքացիություն չունեցող անձինք,
2. խորհրդատվական մարմիններ, որոնք բաղկացած են ինչպես օտարերկրյա ռեզիդենտներից, այնպես էլ՝ ընդունող երկրի քաղաքացիներից,
3. իրավասու տեղական հանձնաժողովներում միգրանտ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը՝ որպես խորհրդատու:

Ընդհանուր առմամբ միգրանտների ակտիվ մասնակցությունը ընդունող երկրի քաղաքացիական և քաղաքական կյանքում՝ միգրանտների ինտեգրման կարևոր պայմաններից է: Միգրանտները սկսում են զգալ պատկանելություն ընդունող երկրի հասարակությանը, ինչի արդյունքում ամրապնդվում է սոցիալական համախմբվածությունը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքներին լիարժեք հասանելիությունը սովորաբար կապված է քաղաքացիության հետ:

Միգրանտների համար քաղաքացիական և քաղաքական մասնակցությանը հասանելիությունը դրսևորվում է երեք հիմնական ձևերով, որոնք են՝

1. մասնակցություն կամավոր միավորումների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, արհեստակցական միությունների և քաղաքական կուսակցությունների գործունեությանը,
2. ընտրական մասնակցություն՝ համապետական, համայնքային և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին,
3. մասնակցություն պետական մարմինների կողմից հասարակության տարբեր խմբերի հետ ազգային, մարզային կամ համայնքային մակարդակում անցկացվող խորհրդակցական հանդիպումներին:

Չեխիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը վարում է ինտեգրված բազմալեզու (յոթ լեզուներով) պորտալ՝ միջազգային որակավորված մասնագետների և ազգային գործատուների համար: Պորտալը տրամադրում է մանրամասն տեղեկություններ այն պայմանների մասին, որոնց բավարարելու դեպքում օտարերկրյա քաղաքացիներին կթույլատրվի աշխատել Չեխիայի Հանրապետությունում: Պորտալը ներառում է տարբեր բաժիններ՝

օտարերկրացիների զբաղվածության հարցեր

այս բաժնում կարող ենք գտնել տեղեկություններ և խորհրդատվություն Չեխիայի Հանրապետությունում աշխատանքի օրինական թույլտվություն ստանալու գործընթացի վերաբերյալ,

աշխատանքային շարժունակության եվրոպական պորտալ

այս բաժինը տեղեկատվություն է հաղորդում Եվրոպական Միության և Եվրոպական տնտեսական գոտու երկրների քաղաքացիներին Չեխիայի Հանրապետությունում աշխատելու հնարավորությունների մասին,

զբաղվածության գործակալություններ

տրամադրում է աջակցություն լիազոր մարմնի կողմից հաստատված մասնավոր գործակալությունների որոնման հարցում,

աշխատանք օտարերկրացիների համար

այս բաժինը ներկայացնում է թափուր հաստիքներ, որոնք նախատեսված են ընդունող երկրի քաղաքացի չհանդիսացողների համար: Նրանք կարող են որոնել թափուր աշխատատեղերը կամ ներկայացնել իրենց ռեզյումեն: Օտարերկրացի աշխատանք փնտրողները կարող են տվյալների բազայում որոնել նույն աշխատանքային հայտարարությունները այնպես, ինչպես դա անում են Չեխիայի Հանրապետության քաղաքացիները, միայն թե որոնման հարմարեցված կարգավորումներով:

Պրահայում գործում է նաև ինտեգրացիոն կենտրոն, որը հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություն է, միգրանտներին տրամադրում է տարածք, որտեղ միգրանտները կարող են հանդիպել, սովորել, շփվել և ստանալ անվճար և որակյալ տեղեկատվություն:

Կենտրոնն առաջարկում է անվճար իրավաբանական խորհրդատվություն, միջմշակութային օգնականների (intercultural assistants) կողմից տրամադրվող աջակցություն և չեխերենի իմացության տարբեր մակարդակներ ունեցող միգրանտների համար լեզվի անվճար դասընթացներ, ներառյալ հատուկ մշակված դասընթացներ փոքր երեխաներ ունեցող ծնողների համար (ներառյալ երեխաների անվճար խնամքը): Կենտրոնը կազմակերպում է ուսումնական սեմինարներ և ինտեգրացիոն միջոցառումներ: Կենտրոնի կայքէջի տեղեկատվությունը հասանելի է արաբերեն, չեխերեն, անգլերեն, մոնղոլերեն, ռուսերեն, ուկրաիներեն և վիետնամերեն լեզուներով:

Չեխիայում իրականացվում է նաև «Ընտանիք հարևանությամբ» (Next door family) նախագիծը, որը նպատակ ունի լուծել միգրանտների և համայնքների մեծամասնության միջև անբավարար հաղորդակցության խնդիրը: Ծրագիրն առաջին անգամ մեկնարկել է Չեխիայում «Word 21» ոչ պետական կազմակերպության կողմից և նպատակ է հետապնդել համախմբել չեխ ընտանիքներին միգրանտ ընտանիքների հետ մեկ վայրում՝ առերես հանդիպման (օրինակ՝ ոչ պաշտոնական ճաշի) անցկացման միջոցով՝ խթանելու բնիկ քաղաքացիների և միգրանտների միջև հաղորդակցության և անձնական-ընկերական կապերի հաստատումը, ինչպես նաև միջմշակութային երկխոսությունը: Ժամանակի ընթացքում գաղափարը տարածվեց շատ այլ երկրներում: Մինչև 2012 թվականը նախագիծը տարածվեց Բելգիայում, Հունգարիայում, Իտալիայում, Մալթայում, Սլովակիայում և Իսպանիայում: Միջնորդելով օտարերկրյա և չեխական ընտանիքների միջև անմիջական շփումը՝ ծրագիրը նպաստում է փոխադարձ գիտելիքների և փոխըմբռնման միջավայրի ստեղծմանն ու զարգացմանը: Նպատակը ոչ միայն հասարակության շրջանում օտարերկրացիների նկատմամբ առկա բացասական վերաբերմունքի փոփոխումն է՝ դեպի դրական, այլև միգրանտների կողմից ընդունող երկրի բնակչության մեծամասնությանը՝ որպես «փակ» և «անբարյացակամ» հասարակություն ընկալելու միտումը փոխելն է:

Հարցեր քննարկման համար

1 *ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ ինչ դերակատարում ունեն ՀՀ ներքին գործերի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները:*

2 *Ինչպիսի՞նն է միգրացիոն քաղաքականությունը Չեխիայի Հանրապետությունում:*

Օգտագործված գրականության ցանկ

1 United Nations. Convention Relating to the Status of Refugees, 1951.
[ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիա]

2 United Nations. Universal Declaration of Human Rights, 1948.
[Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր]

3 Council of Europe. Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings, 2005.
[Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին]

4 Հայաստանի Հանրապետություն. Օրենք «Փախստականների և ապաստանի մասին»
[Law of the Republic of Armenia on Refugees and Asylum].

5 Հայաստանի Հանրապետություն. Օրենք «Օտարերկրացիների մասին»
[Law of the Republic of Armenia on Foreigners].

6 Good Practices in Migrant Integration: Trainee's Manual, 2018. [Լավփորձառություններ միգրանտների ինտեգրման ոլորտում. Դասընթացավարի ձեռնարկ]

7 European Commission. European Web Site on Integration: Migrant Integration Information and Good Practices. Մուտք է գործվել՝ 2025 թ. ապրիլին:
https://ec.europa.eu/migrant-integration/home.
[Եվրոպական ինտեգրման կայք՝ միգրանտների ինտեգրման տեղեկատվություն և լավագույն փորձառություններ]

8 Migration Policy Group. European Web Site on Integration: Presentation. Մուտք է գործվել՝ 2025 թ. ապրիլին: http://www.migpolgroup.com/diversity-integration/european-web-site-on-integration/.
[Եվրոպական ինտեգրման կայք. Ներկայացում]

9 Office of the United Nations High Commissioner for Human Rights (OHCHR). Migration and Human Rights: Improving Human Rights-Based Governance of International Migration, 2013. Մուտք է գործվել՝ 2025 թ. ապրիլին:
https://www.ohchr.org/Documents/Issues/Migration/MigrationHR_improvingHR_Report.pdf.
[Միգրացիան և մարդու իրավունքները. Մարդու իրավունքների վրա հիմնված միջազգային միգրացիայի կառավարման բարելավում]

10 International Organization for Migration (IOM). International Migration Law No. 30: Glossary on Migration. 2nd ed. Geneva: IOM, 2013.
[Միգրացիայի միջազգային իրավունքի թիվ 30 փաստաթուղթ՝ միգրացիայի տերմինների բառարան]

11 UNHCR. Conclusion on Local Integration, 2005. Մուտք է գործվել՝ 2025 թ. ապրիլին:
http://www.refworld.org/docid/4357a91b2.html.
[Տեղական ինտեգրման վերաբերյալ եզրակացություն]

12 Միջազգային միգրացիայի կազմակերպություն (ՄՄԿ). Միգրացիոն տերմինաբանության ձեռնարկ, Երևան, 2011 թ. [Glossary of Migration Terminology]

Մոդուլի հետ կապված

Մոդուլի հետ կապված հանձնարարականներ, գործնական աշխատանքների նկարագրեր

- **Դեպքերի քննարկում**, որոնց շրջանակում նախատեսվում է իրականացնել խմբային աշխատանքներ: Խմբերը պետք է ներկայացնեն կարիքների գնահատումը, կազմեն միջամտության պլանն ու հետագա աշխատանքները, շեշտադրելով ինտեգրման հետ կապված քայլերի հաջորդականությունն ու շահագրգիռ կողմերի ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը:

Դեպք 1

Ալլան և Անդրեյը 2023թ. ՌԴ-ից տեղափոխվել են ՀՀ: Նրանք ունեն 2 դպրոցահասակ երեխա: Ընտանիքի բոլոր անդամներն ունեն լեզվական հաղորդակցման, զբաղվածության և մի շարք այլ խնդիրներ:

Դեպք 2

Սեմին չադրա չկրելու հետևանքով չհետապնդվելու համար լքել է Իրանի Հանրապետությունը: ՀՀ-ում ունի ինտեգրման խնդիրներ:

Դեպք 3

Սալմանը ՀՀ է ժամանել Հնդկաստանից: Վերջինս ընդունվել է Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան: Նա բնակվում է հանրակացարանում, սակայն ունի զբաղվածության խնդիր:

- **Դերային խաղեր**, որոնց շրջանակներում մասնակիցներից լինելու են միգրանտի և սոցիալական աշխատողի դերում, սակայն սոցիալական աշխատողն ըստ անհրաժեշտության կարող է ներգրավել նաև այլ մասնագետների և վերջիններիս հանձնարարի դերեր:
- **Ֆիլմի դիտում**
- **Հարցադրումներ**, յուրաքանչյուր թեմայի ավարտից հետո տրվելու են հարցեր, որոնց շուրջ ծավալվելու է քննարկում:

Հավելված 1

Տարեթիվ	Հայցել է ապաստան	Ճանաչվել է փախստական	Մերժվել է	Դադարեցվել է
2010	68	25	-	-
2011	73	54	-	-
2012	579	390	-	-
2013	320	260	-	-
2014	226	136	11	17
2015	316	202	43	59
2016	110	37	41	43
2017	151	99	14	41
2018	218	72	33	98
2019	248	116	42	89
2020	206	81	61	45
2021	260	78	67	10
2022	968	208	63	35

Ապաստան հայցած անձանց թիվը՝ ըստ ազգության, տարիքի, սեռի 2024 թ																					
Ազգություն	0-13			14-17			18-34			35-64			65 +			Անհայտ			Ընդամենը		
	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.
Գվիենացի	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1
Հաիթցի	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	2	0	2
Նիգեր	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1
Եզդի	0	0	0	1	0	1	0	1	1	1	0	1	0	0	0	0	0	0	2	1	3
Ամերիկացիներ	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	1	0	1	0	0	0	2	0	2
ԱՆՀԱՅՏ	1	2	3	0	0	0	20	2	22	9	2	11	1	0	1	1	0	1	31	6	37
Ավստրիացիներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	1	0	1
Արաբներ	24	20	44	7	3	10	31	17	48	52	16	68	2	1	3	1	0	1	116	57	173
Բաշկիրներ	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1
Բելառուսներ	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1
Գերմանացիներ	0	0	0	0	0	0	0	0	0	2	0	2	0	0	0	0	0	0	2	0	2
Թուրքմեններ	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1
Իրանցի	2	0	2	0	1	1	1	2	3	3	2	5	0	0	0	0	0	0	6	5	11
Հայ	9	3	12	3	0	3	12	5	17	16	8	24	5	1	6	0	0	0	45	17	62
Ուզբեկներ	0	0	0	0	0	0	1	0	1	1	0	1	0	0	0	0	0	0	2	0	2
Ուկրաինացիներ	2	8	10	3	4	7	10	14	24	13	26	39	0	2	2	0	0	0	28	54	82
Պարսիկ	3	0	3	3	1	4	7	1	8	15	10	25	1	0	1	0	0	0	29	12	41
Ռուսիններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	1	0	1
Ռուսներ	2	2	4	0	0	0	11	3	14	16	8	24	0	0	0	0	0	0	29	13	42
Վրացիներ	0	0	0	0	0	0	1	0	1	2	1	3	0	0	0	0	0	0	3	1	4
Քրդեր	2	1	3	2	1	3	1	1	2	4	3	7	1	0	1	0	0	0	10	6	16
Ֆրանսիացիներ	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1
Ընդհանուր	46	37	83	19	10	29	97	46	143	139	76	215	13	4	17	2	0	2	314	173	487

Ապաստանի հայցեր Հայաստանում

1999թ.	23 անձ
2001թ.	10 անձ
2002թ.	8 անձ
2003թ.	82 անձ (ԱՄՆ-Իրաք)
2004թ.	162 անձ
2005թ.	163 անձ
2006թ.	650 անձ (Լիբանան-Իսրայել)
2007թ.	291 անձ
2008թ.	207 անձ (Օսեթիա)
2009թ.	69 անձ
2010թ.	68 անձ
2011թ.	73 անձ
2012թ.	579 անձ (Սիրիա)
2013թ.	320 անձ
2014թ.	226 անձ (Ուկրաինա՝ Դոնեցկ, Լուգանս)
2015թ.	316 անձ
2016թ.	110 անձ
2017թ.	155 անձ
2018թ.	215 անձ
2019թ.	249 անձ
2020թ.	207 անձ
2021թ.	260 անձ
2022թ.	975 անձ (ՌԴ-Ուկրաինա)
2023թ.	817 անձ
2024թ.	347 անձ (01.08.2024 դրությամբ)

Փախստականի կարգավիճակ ստացած անձանց թիվը՝ ըստ ազգության, տարիքի, սեռի 2024 թ																					
Ազգություն	0-13			14-17			18-34			35-64			65 Plus			Անհայտ			Ընդամենը		
	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.	Ա	Ի	Ընդ.
Հաիթցի	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	2	0	2
Նիգեր	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1
Եզդի	2	0	2	1	0	1	0	1	1	3	1	4	0	0	0	0	0	0	6	2	8
ԱՆՀԱՅՏ	0	0	0	0	0	0	3	0	3	2	1	3	0	0	0	0	0	0	5	1	6
Արաբներ	11	1	12	1	1	2	5	0	5	7	2	9	0	0	0	0	0	0	24	4	28
Բելառուսներ	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	1	0	1
Հայ	9	4	13	3	1	4	7	6	13	8	7	15	3	1	4	0	0	0	30	19	49
Յորուբացի	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1
Ուկրաինացիներ	3	5	8	0	1	1	9	11	20	6	12	18	0	1	1	0	0	0	18	30	48
Պարսիկ	0	0	0	0	0	0	2	1	3	3	2	5	0	0	0	0	0	0	5	3	8
Ռուսիններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	1	1
Ռուսներ	0	0	0	0	0	0	1	1	2	0	1	1	0	0	0	0	0	0	1	2	3
Քրդեր	0	0	0	0	0	0	1	0	1	1	0	1	0	0	0	0	0	0	2	0	2
Ընդհանուր	26	11	37	5	3	8	29	20	49	32	26	58	3	3	6	0	0	0	95	63	158

Հավելված 2

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ՉԻՐԱԳՈՎԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 13216/05)

ՎՃԻՌ

(ըստ էության)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

16 հունիսի 2015թ.

Դիմումատուները և Ադրբեջանի կառավարությունը պնդել են, որ ԼՂՀ-ի և հարակից տարածքների բնակիչներին պարբերաբար տրվել են հայկական անձնագրեր: ՄՃԽ-ն նշել է, որ «Հայաստանը բնակչության մեծամասնությանն իր անձնագրերն է տվել՝ արտասահման մեկնելու նպատակով» (վերը նշված 2005 թվականի զեկույց, էջ 5): Ադրբեջանի կառավարությունը նաև մատնանշել է նշված տարածքների բնակիչների կողմից Հայաստանի քաղաքացիություն ստանալու հնարավորությունը:

Հայաստանի կառավարությունն իր կողմից նշել է, որ և՛ Հայաստանը, և՛ ԼՂՀ-ն ունեն երկքաղաքացիության մասին դրույթներ: Ավելին, ԼՂՀ-ի հետ «անձնագրային համակարգի կազմակերպման» մասին 1999 թվականի փետրվարի 24-ի համաձայնագրի համաձայն՝ Հայաստանը, որոշակի հանգամանքներում, ԼՂՀ-ի բնակիչներին տրամադրում է անձնագրեր: Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսվում է՝

«Կողմերը համաձայնում են, որ իրենց քաղաքացիները Կողմերից յուրաքանչյուրի տարածքում ունենան ազատ տեղաշարժվելու և բնակվելու իրավունք:

Սույն համաձայնագրի շրջանակում, մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգայնորեն կճանաչվի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ցանկանում են լքել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության տարածքները, կարող են դիմել և ձեռք բերել Հայաստանի Հանրապետության անձնագիր:

Կողմերը համաձայնում են, որ սույն հոդվածի շրջանակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության անձնագիր ձեռք բերելը նրանց չի շնորհում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Այդ անձնագրերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կողմից կարող են միայն օգտագործվել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներից դուրս ճամփորդելու նպատակով և չեն կարող օգտագործվել որպես անձը հաստատող փաստաթուղթ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում ներքին օգտագործման համար»:

1999 թվականին ընդունվել են նաև այս համաձայնագրի կիրառման հետ կապված կարգավորումներ, որոնց համաձայն ԼՂՀ-ի բնակիչներին հայկական անձնագրեր տրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ արտասահման մեկնելու նպատակը բուժում ստանալն է, կրթությունը կամ այլ անձնական բնույթի խնդիր: Հայաստանի կառավարությունը պնդել է, որ 1999 թվականի համաձայնագրի շրջանակում անձնագիր է ստացել ավելի քիչ, քան 1 000 անձ: